

## ԿԼԵՆՏԵԼԻ ՀԱՅ ՈՍՏԻԿԱՆՆԵՐԸ ԴԱՏԻ ՏՈՒԱԾ ԵՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Կլենտելի ոստիկանական ուժին մաս կազմող չորս Հայ ոստիկաններ՝ ճոն Պալեան, Ռոբերտ Բարսեղյան, Տիգրան Թոփազիկեան և Սահակ Մարտիրեան դատի տուած են Կլենտելի ոստիկանութիւնը՝ տարիներ շարունակ իրենց նկատմամբ ազգային խտրականութիւն ցուցաբերելու, վիրաւորանքներ հասցնելու և ծաղրանքի ենթարկելու պատճառով:

Հայ ոստիկանները յայտարարած են, որ ղեկավարութիւնը յաճախ ամենավտանգաւոր պարտականութիւնները տուած է իրենց, սակայն տարիներու ընթացքին պաշտօնի բարձրացում չեն ստացած:

Քաղաքի վարչական պատասխանատու Սթիվ Հաուլըտ այս կապակցութեամբ յայտարարութիւն կատարելով հերքած է հայ ոստիկաններու մեղադրանքները:

Քաղաքային խորհուրդը փակ նիստ գումարելով քննած է դատական հարցը:

Ոստիկաններու փաստաբան Գարնի Շակարեան դիտել տուած թէ, հայազգի ոստիկաններու թիւը շատ փոքր է բաղադատած Կլենտելի բնակչութեան մէջ հայերու կազմած թիւին:

Յայտնենք որ Կլենտելի աւելի քան 200 հազար բնակչութեան առնուազն 40 տոկոսը հայեր են:

## ՍՈՉԻ ՍԷՋ ՍԱՐԳՍԵԱՆ-ՄԵԴԿԵՏԵԻ-ԱԼԻԵԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԱՄԱՁԱՅՆԱԾ ԵՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԼՂՅ-Ի ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՁ

Յունուար 25-ին Սոչիի մէջ կայացած է Հայաստանի, Ռուսաստանի և Ատրպէյճանի ղեկավարներու՝ Սերժ Սարգսեանի, Դմիտրի Մեդվեդեւի և Իլհամ Ալիեւի հերթական հանդիպումը՝ Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման շուրջ: Հանդիպման երկրորդ մասին մասնակցած են նաեւ երեք երկիրներու արտաքին գործոց նախարարները:

ՀՀ նախագահի մամուլի գրասենեակի տարածած հաղորդագրութեան համաձայն, հանդիպման ընթացքին քննարկուած են Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման բանակցային գործընթացի ներկայ փուլի հեռանկարներուն վերաբերող հարցեր:

Ըստ բանակցութիւններու մօտ կանգնած բարձրատիճան պաշտօնեայի մը, ամրագրուած է բանակցութիւններու հետագայ փուլին Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան մասնակցութեան կարեւորութիւնը, ինչպէս նաեւ, ազդերու ինքնորոշման իրաւունքի առաջնահերթութիւնը՝ հակամարտութեան կարգաւորման ճամբուն:

Ռուսաստանի արտաքին գործոց նախարար Սերգէյ Լաւրով իր կարգին յայտնած է, որ Հայաստան և Ատրպէյճան պիտի պատրաստեն զարաբաղեան հակամարտութեան կարգաւորման փաստա-



Իլհամ Ալիեւ, Դմիտրի Մեդվեդեւ և Սերժ Սարգսեանի հանդիպումը Սոչիի մէջ

թուղթի շուրջ իրենց առաջարկութիւնները: Ան լրագրողներուն ըսած է որ, փաստաթուղթի ներածական մասը արդէն համաձայնեցուած է:

«Այսօրուայ գլխաւոր արդիւնքը, ձեռք ձգուած համաձայնութիւնն էր, որ թէեւ փաստաթուղթ-

թիւն մէջ կան դրոյթներ, որոնց շուրջ կողմերը դեռ համաձայնութեան չեն եկած, անոնց վերաբերեալ կողմերը պիտի ներկայացնեն իրենց յատուկ գաղափարները և ձեւակերպումները, որոնք կը ներառուին այդ տէքստին մէջ», - յայտարարած է Լաւրով:

## ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ ԽԵՂԴԵՑ ԸՆԴԴԻՍՈՒԹԵԱՆ ՁԱՅՆԸ

Յունուար 26-ին Եւրոպայի խորհուրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵՆԽՎ) Ընթացակարգային յանձնաժողովը հաստատեց ԵՆԽՎ հայաստանեան պատուիրակութեան կազմի մանդատները: «Ժառանգութիւն» խմբակցութեան ղեկավար Ստեփան Սաֆարեան այս կապակցութեամբ յայտնեց, որ կատարուածը Հայաստանի ընդդիմութեան ձայնը խեղդելու հերթական քայլն էր: «Այդ որոշումը նշանակում է, որ հայկական իշխանական դեաստուրը հերթական անգամ խեղդեց Հայաստանի և Հայաստանի ընդդիմութեան ձայնը», - ըսաւ Ստեփան Սաֆարեան, աւելցնելով, որ այդ որոշումը «դեռ

վերջը չէ, դրանով ամէն ինչ աւարտուած չէ», և որ իրենք յառաջիկային հանդէս կու գան համապատասխան յայտարարութեամբ:

Յիշեցնենք, որ հայաստանեան պատուիրակութեան կազմը, խորհրդարանի նախագահի որոշմամբ, փոփոխութեան ենթարկուած էր և «Ժառանգութեան» անդամ Զարուհի Փոստանջեան փոխարինուած էր Օեկական Արծրունի Աղաջանեանով:

Օր մը առաջ՝ ԵՆԽՎ-ի ձմեռնային նստաշրջանի սկզբնաւորութեան հաստատուած էր ազգային բոլոր պատուիրակութիւններու լիազօրութիւնները, բացի ալպանական ու հայկական պատուիրակութիւններէն:

## ՀՐԱՆԴ ՏԻՆՔԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՊՈԼՍԱՀԱՅ ՍԻՈՒԹԵԱՆ ՅԻՇԱՏԱԿԻ ՁԵՌՆԱՐԿԸ

Յունուար 19ին լրացաւ պոլսահայ ականաւոր մտաւորական, «Ակօս» թերթի հրատարակիչ և խմբագրապետ Հրանդ Տինքի սպանութեան Յրդ տարելիցը: Այս առթիւ Իսթանպուլի մէջ տեղի ունեցած քաղաքական մեծ հաւաքին աւելցնելով՝ սփիւռքի հայաշատ կեդրոններու մէջ եւս, յատուկ հոգեհանգստեան արարողութիւններով ու հանդիսութիւններով նշուեցաւ մեծ հայասէրի յիշատակը:

Կիրակի, Յունուարի 24ին Լոս Անճելըսի եւ շրջակայքի բոլոր եկեղեցիներուն մէջ Հրանդ Տինքի սպանութեան Յրդ տարելիցը յիշատակուեցաւ հոգեհանգստեան մաս-

նաւոր արարողութիւններով: Վէն Նայսի Ս. Պետրոս Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ մէջ տեղի ունեցած հոգեհանգստեան յատուկ արարողութեան նախագահեց Արեւմտեան Թեմի առաջնորդական փոխանորդ՝ Հոգ. Տ. Տաճատ Մ. Վարդ. Եարտըմեան: Պատարագէն ետք եկեղեցւոյ «Գարակէօզեան» սրահին մէջ տեղի ունեցաւ Հրանդ Տինքի նուիրուած յիշատակի հանդիսութիւնը, որուն ներկայ եղան Հոգ. Տաճատ Մ. Վրդ., հայ մամուլի եւ կազմակերպութեանց ներկայացուցիչներ, պոլսահայեր և

## ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆՈՒԹԻՒՆԸ ԴՐԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Միացեալ Նահանգներու պետական քարտուղարի տեղակալ Ֆիլիպ Կորտըն դրական գնահատեց Հայաստանի Սահմանադրական դատարանի որոշումը, ըստ որում հայ-թրքական արձանագրութիւնները չեն հակասեր Հայաստանի սահմանադրութեան:

«Մեր կարծիքով, դատարանի վճիռը դրական քայլ է թուրքիոյ և Հայաստանի միջեւ յարաբերութիւններու նորմալացման եւ արձանագրութիւններու վաւերացման գործընթացը առաջ տանելու տեսակէտէն», - «Ազատութիւն» ռատիոկայանին ըսած է Կորտըն: - «Դատարանի վճիռը թույլ կու տայ արձանագրութիւնները, այն տեսքով, ինչպէս անոնք եղած են բանակցութիւններու և ստորագրման պահուն, տանիլ խորհրդարան՝ վաւերացման: Որեւէ տպաւորութիւն չկայ, թէ դատարանի վճիռը կը սահմանափակէ կամ ինչ-որ ձեւով կը բնորոշէ արձանագրութիւնները»:

Միացեալ Նահանգներու պետական քարտուղարութիւնը այս պիտով կը հակադարձէ թուրքիոյ կողմէ հնչած այն առարկութիւններուն, թէ Սահմանադրական Դատարանի որոշումը նախապայմաններ



պետական քարտուղարի տեղակալ Ֆիլիպ Կորտըն

կը պարունակէ:

Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Ահմեդ Դավութօղլու այս կապակցութեամբ հեռախօսային գրոյց ունեցած է ԱՄՆ-ի պետական քարտուղար Հիլըրի Բլինթոնի հետ: Թուրքական «Անատոլու» լրատուական գործակալութեան փոխանցմամբ, Դավութօղլու ամերիկացի պաշտօնակիցին փոխանցած է թուրք-

ՏԵՍԱԿԷՏ

ՕՐՈՒՄԱՆ ԸԱՐՑԵՐՈՒՆ ԸՏԵ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՐԱՄԱՆԿ ԽԱՂԵՐ

Գ. ԽՈՏԱՆՆԵԱՆ

Անցնող շաբթուայ ընթացքին ականատես եղանք քաղաքական առումով երկու խորամանկություններու, որոնցմէ առաջինի հեղինակը թրքական կառավարութիւնն էր, իսկ երկրորդինը՝ Հայաստանի իշխանութիւնը:

Հայ-թրքական յարաբերութիւններու բարելաւման միտող երկու Արձանագրութիւններու ստորագրումէն ասդին անցած է աւելի քան երեք ամիս, սակայն թուրքիոյ Խորհրդարանը ցարդ ոչ մէկ քայլ արած է զանոնք վաւերացնելու ուղղութեամբ: Ընդհակառակը, թուրք բարձրաստիճան պաշտօնեաները առիթը չեն կորսնցնէր յայտարարելու, որ Արձանագրութիւններու վաւերացման համար կայ նախապայման՝ Լեռնային Ղարաբաղի հարցի լուծումը եւ կամ այդ ուղղութեամբ կարեւոր տեղաշարժ:

Արձանագրութիւններու վաւերացումը ձգձգելու թուրքիոյ վարած քաղաքականութիւնը, դիւանապետական առումով վերջերս սկսած դժուարութիւններ ստեղծել: Վարչապետ Ռէճեփ Էրտողան Մոսկուա կատարած իր այցելութեան ընթացքին Ռուսաստանի դեկավարութենէն լսեց այն ինչ, որուն կարծէք թէ պատրաստ չէր ան: Ռուսաստանի վարչապետ Վլատիմիր Փութին, էրտողանի ներկայութեան յայտարարեց, որ Հայ-թրքական յարաբերութիւնները եւ Ղարաբաղի հարցը պէտք է կապել զիրար, քանի որ իւրաքանչիւրը առանձին առած ինքնին կնճռոտ հարցեր են, իսկ իրարու հետ միացնելով շատ աւելի դժուար լուծելի կը դառնան:

Թուրք վարչապետը վերադառնալով Անգարա, դիմեց նոր խորամանկութեան մը, այս անգամ գործընթացը ձախողցնելու մեղքը Հայաստանի վրայ բարդելու փորձ կատարելով:

Յունուար 12-ին Հայաստանի Սահմանադրական Դատարանը դարձադաճիկ նախադատութիւններով համեմուած որոշում մը հրապարակելով եկաւ ըսելու, որ Հայ-թրքական Արձանագրութիւնները կը համապատասխանեն Հայաստանի Սահմանադրութեան եւ հետեւաբար կրնան վաւերացուիլ Ազգային ժողովին կողմէ:

Դատարանի այս որոշումի մասին Հայաստանի մէջ եղան բուռն քննարկումներ, սակայն ոչ մէկ արձագանք թուրքիոյ կողմէ: Յանկարծ, շաբաթ մը ետք, թուրքիոյ արտաքին գործոց նախարարութիւնը մեծ զիւտ մը կատարած ըլլալու յաւակնութեամբ յայտարարեց, թէ Հայաստանի Սահմանադրական Դատարանի որոշումին մէջ կան նախապայմաններ, իսկ վարչապետն ու արտաքին գործոց նախարարը սկսան մեղադրել Հայաստանը՝ Արձանագրութիւններու վաւերացումը խոչընդոտելու մէջ:

Այս փորձով եւս, թուրքերը մատնուեցան դիւանապետական ձախողութեան, յատկապէս երբ Միացեալ Նահանգներու պետական քարտուղարութիւնը եկաւ յայտարարելու թէ, դրական կը գնահատէ Հայաստանի Սահմանադրական Դատարանի որոշումը:

Այս բոլորի լոյսին տակ, աւելի ու աւելի յստակ կը դառնայ, որ թուրքիա նպատակ չունի վաւերացնելու իր իսկ ստորագրած փաստաթուղթերը եւ պարզապէս զանոնք կը գործածէ, տարածաշրջանէն ներս իր քաղաքական նպատակներու իրագործման որպէս միջոց եւ կամ խաղաքարտ:

Այս բոլորը գիտէին Հայաստանէն ներս թէ դուրս շատ շատեր, սակայն ժամանակն է որ անդրադառնան նաեւ Արձանագրութիւններու շուրջ բանակցող եւ զանոնք ստորագրող Հայաստանի իշխանաւորները, առիթ չտալու համար թուրքիոյ, տակաւին երկար ժամանակ շահագործելու այս գործընթացը, յատկապէս որ կը մօտենայ Յեղասպանութեան տարելիցը:

Երկրորդ խորամանկութեան հերոսը հանդիսացաւ Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Յովիկ Աբրահամեանը:

Եւրոպայի Խորհուրդի Խորհրդարանական վեհաժողովի (ԵՆԽՎ) անդամ երկիրները ըստ կանոնադրութեան, իրենց պատուիրակութեան մէջ պէտք է ընդգրկեն ընդդիմադրութիւնը ներկայացնող խորհրդարանականներ: Վերջին տարիներուն Հայաստանի պատուիրակութեան մաս կը կազմէր «Ժառանգութիւն» ընդդիմադիր կուսակցութեան պատգամաւոր Զարուհի Փոստանձեան:

Անվարան կարելի է ըսել, որ Զարուհի Փոստանձեան կը հանդիսանայ հայկական Խորհրդարանի ամենէն գործունեայ անդին տքնաշան աշխատանք կը տանի ժողովուրդի իրաւունքներու պաշտպանութեան, ազգային հարցերը ջատագովելու եւ իշխանութիւններու ոտնձգութիւններուն դէմ պայքարելու գծով: Փոստանձեան նոյնքան հետեւողական կերպով ԵՆԽՎ-ի բեմէն ու միջանցքներուն մէջ կը պայքարի Հայաստանի մէջ ժողովրդավարութեան հաստատման եւ Մարտի 1-ի սպանդի բացայայտման ուղղութեամբ:

Այս շաբաթ, Հայաստանի իշխանութիւնները խորամանկ քայլի մը դիմելով, յաջողեցան Տիկ. Փոստանձեանը հեռացնել պատուիրակութեան կազմէն: Արդարեւ՝ Յունուար 25-ին բացուած ԵՆԽՎ-ի նստաշրջանի նախօրեակին Յովիկ Աբրահամեան որոշեց, որ քանի չՅԳ դուրս եկած է համախոհական կառավարութենէն, ԵՆԽՎ-ի դաշնակցական անդամը կը գրաւէ ընդդիմադրութեան տեղը եւ այդպիսով պահանջուած են պատուիրակութեան կազմութեան պայմանները:

Հայաստանի հանրային կարծիքը առայժմ դժուարութիւն ունի դաշնակցութիւնը ընդունելու որպէս իսկական ընդդիմադրութիւն ու կը կասկածի, որ անոր ներկայացուցիչը կարողանայ պաշտօնական զիծէն դուրս ելլել՝ ԵՆԽՎ-էն ներս:

Այսպիսով, Հայաստանի իշխանութիւնները անգամ մը եւս յաջողեցան, Մարտ 1-ին դէպքերէն ասդին Հայաստանը հսկողութեան տակ պահող միջազգային այս կառույցէն ներս, ընդդիմութեան ձայնը վերջնականապէս խեղդելու իրենց ծրագիրներուն մէջ:

ՄԻ ՔԻՉ ԵՐԿԱՐ Է, ԲԱՅՑ ՈՉԻՆՉ

ՅԱԿՈՐԲԱԴԱՆԵԱՆ «ԼՐԱԳԻՐ»

Հայաստանի ու Ադրբեջանի նախագահները Սոչիում հանդիպեցին, ՌԴ նախագահի ներկայութեամբ բանակցեցին, յետոյ ընթացեցին, յետոյ բուրան քշեցին, դահուկով սահեցին, յետոյ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հետ հանդիպեցին, ու բաժանուեցին: ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լաւրովը յայտարարեց, որ Սոչիի հանդիպմանը կողմերը մշակեցին Մադրիդեան սկզբունքների պրիամբուլան, իսկ ԵԱՀԿ Մինսկի խմբի ռուսաստանցի համանախագահ Սերգեյևիովին էլ յայտարարեց, թէ յոյս ունեն, որ Հայաստանն ու Ադրբեջանը երկու շաբաթուայ ընթացքում համանախագահներին կը ներկայացնեն իրենց դիտողութիւնները Մադրիդեան փաստաթղթի վերաբերեալ:

Կարծես թէ Սոչիում տեղի ունեցած այդ ամէնը էլի շատ անգամ է կրկնուել Ղարաբաղի հակամարտութեան բանակցային գործընթացում: Կարծես թէ այն խարհի տարբեր քաղաքներում էլ ինքն եղել Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման գործընթացի այդօրինակ յազմեցած բանակցային օրեր, ներկայացուած առաջարկներ, դրանց վերաբերեալ դիտողութիւնների յոյսեր: Այդ առումով տպաւորութիւնն այն է, որ Սոչին ընդամէնը հերթական հանգրուանն է, իսկ առջեւում էլ ի դեռ կան քաղաքներ ու գիւղեր, որոնք պատիւ կունենան հիւրընկալել Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահներին ու ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներին:

Այդ ամէնը շատերին հիմք է տալիս ասելու, որ իրականում բանակցային գործընթացն իմիտացիա է, որի նպատակը պատերազմի այլընտրանք բանակցութիւն ապահովելն է: Իսկ շատերի համար էլ Սոչին հիմք է յայտարարելու, որ ահա, տեսէք, Ղարաբաղի հարցում ճնշումները Հայաստանի վրայ մեծանում են եւ մօտենում է ոչ հայանպաստ համաձայնութեան օրը, եւ Սոչին հերթական եւս մէկ քայլ էր դէպի այդ համաձայնութիւնը: Կարելի է ասել թէ մէկը, թէ միւրը: Ճշմարտութիւնը, ինչպէս գրեթէ միշտ, կամ ինչպէս սովորաբար, ինչ որ տեղ մէջտեղում է:

Ասել, թէ բանակցութիւնն ամբողջովին իմիտացիա է, իհարկէ կը լինի չափազանցութիւն: Բանակցութիւնը բանակցութիւն է, որի ընթացքում թէ միջնորդները, թէ կողմերը ներկայացնում են իրենց տեսակէտը, փորձում են պաշտպանել այն, փորձում են ստանալ իրենց համար ցանկալի արդիւնք, կամ հնարաւորինս նուազեցնել զիջման սահմանը: Բայց չափազանցութիւն կը լինի ասել նաեւ, թէ բանակցութեան ընթացքում կողմերին զիջում է պարտադրում, որ համանախագահ երկրների համբերութեան բաժակը լցուել է, որ նրանց շտապ պէտք է կարգաւորել Ղարաբաղի հակամարտութիւնը, եւ այդ պատճառով նրանք պարտադրում են կողմերին ստորագրել համաձայնագիր, որի սկզբունքները շատ վատ են Հայաստանի համար:

Նախ, որեւէ մէկը, ով պնդում է, որ Հայաստանին պարտադրում են ինչ որ բան ստորագրել, դեռեւս յստակ չի փաստարկել, թէ իսկ ինչու են Հայաստանին այդ բանը

պարտադրում: Օրինակ, ինչու են Հայաստանին պարտադրում դուրս գալ ազատագրուած տարածքներից: Ասում են, թէ դա անում են, որ այնտեղ միջազգային ուժեր տեղակայուեն, քանի որ դա իրանի սահմանն է, կա իրանական միջուկային ծրագրի խնդիր, որ միջազգային հանրութիւնը պատրաստուում է իրանին հարուածելուն, եւ այդ կարգի այլ բաներ: Բայց այդ հիմնաւորումը մեղմ ասած մանկական է: Մանկական է այն առումով, որ, նախ՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրները գրեթէ տրամազօրէն տարբեր մօտեցումներ ունեն իրանական խնդրի վերաբերեալ: Դանից բացի, խաղաղապահ ուժերն այն ուժերը չեն, որոնք արդիւնաւէտ ռազմական գործողութիւն ծաւալեն իրանի դէմ: Երրորդ, իրաքի եւ Աֆղանստանի փորձը թերեւս ցոյց տուեց, որ ցամաքային գործողութիւնը, առաւել եւս իրանի դէմ, կը լինի ռազմավարական լուրջ սխալ, որ թոյլ կը տայ Արեւմուտքի: Եւ դատելով իրանական խնդրի հանդէպ Օբամայի վարչակարգի որոշակի տարբեր մօտեցումից, ԱՄՆ գիտակցել է այդ հանգամանքը: Դրանից էլ բացի, Ադրբեջանը թերեւս երբեք չի համաձայնուի հայերից տարածքը հետ վերցնել ու տալ Արեւմուտքին, որ այն այդ տարածքը օգտագործի իրանի դէմ ազդեւորայի կամ ճնշումների համար: Ադրբեջանն այդ դէպքում դառնալու է իրանի թշնամի, իսկ դա, մեղմ ասած, այդքան էլ հաճելի բան չէ նոյնիսկ գերտէրութեան համար, ուր մնաց Ադրբեջանի

Շաք.ը էջ 19

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ  
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի  
ԽՄԲԱԳԻՐ՝  
ՏՕԹԹ. ՍՐՇԱԿ ԳԱԶՆԱՃԵԱՆ  
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ  
ԳԱՐԻԻԷՆ ՍՈՒՆՅԵԱՆ  
ՍԱՅԱԿ ԹՈՒԹՅԵԱՆ  
ՅՈՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ  
ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ  
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ  
Յեռ. (626) 797-7680  
Ֆաքս. (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com  
MASSIS Weekly  
Organ of the Armenian Social  
Democratic Hunchakian Party  
of Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August  
ANNUAL SUBSCRIPTION RATES:  
USA \$50.00, Canada \$60 (Second  
Class), \$75.00 (Air Mail)  
Overseas \$85.00 (2nd Class Mail),  
\$125.00 (Air Mail).  
All payments must be made in  
US funds & Drawn on US banks.  
Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
MASSIS WEEKLY  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104

ՀԱՅԱՍՏԱՆ

ԲԱՆԱԿԻՃԵՑԻՆ ՍԴՅՎ ԵՒ ՅՅԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ

«Haynews.am»: Յունուար 25-ին «Հայեացք» ակումբում բանավիճեցին ԱԺ պատգամաւորներ ՄԴ-ՀԿ Կենտրոնական վարչութեան քաղաքական դիւանի անդամ Վարդան Խաչատրեանը եւ ՀՀԿ անդամ Կարէն Աւագեանը: Խօսելով հայ-թուրքական եւ հայ-ադրբեջանական յարաբերութիւնների մասին՝ Վ.Խաչատրեանն ասաց, որ թէեւ հայ-թուրքական դիւանագիտութեան մէջ որոշակի յաջողութիւններ արձանագրուեցին՝ երկու գործընթացները տարանջատուեցին եւ դարաբաղեան գարգացումները որեւէ կերպ չհամադրուեցին հայ-թուրքական յարաբերութիւնների հետ, բայց «մենք նկատում ենք ճնշումներ Հայաստանի վրայ թէ Ադրբեջանի, թէ Թուրքիայի կողմից: ՄԴ-ի որոշման մասին Թուրքիայի կողմից արձագանքները եւս մէկ անգամ փաստում են, որ վերջինս մեզ համար վստահելի գործընկեր չէ»:



Վարդան Խաչատրեան

նի բացումից այլ խնդիր չի լուծում»:

Ղարաբաղեան հարցի շուրջ խօսելիս Վ. Խաչատրեանն ասաց, որ Ադրբեջանը չի բացառում խնդրի լուծման ռազմական տարբերակը, ինչի հետ չհամաձայնեց Կ. Աւագեանը. «Ալիեւը իր ներքին լարանը հանգստացնելու համար է պարբերաբար հանդէս գալիս նման յայտարարութիւններով, բայց հանդիպումների ժամանակ խաղաղ բանակցային գործընթացի կողմնակիցն է»: Սակայն ըստ ՄԴ-ՀԿ ներկայացուցիչ Վ. Խաչատրեանի՝ «Ադրբեջանի ռազմական վերադիմումը աւելի շատ խօսում է այն մասին, որ ինչպէս Չեխովն է ասել՝ եթէ առաջին ակտի ժամանակ պատից հրացան է կախուած, ուրեմն երկրորդում այն պէտք է կրակի»:

Կ. Աւագեանն այս հարցի վերաբերեալ նշեց, որ միջազգային բոլոր կառույցներում կարող ենք ներկայանալ որպէս լաւ գործընկեր, քանի որ բոլոր այս յարաբերութիւնների վերակսման հիմքում դրուած պահանջներն իրականացրել ենք, ինչը չի կարելի ասել Թուրքիայի մասին: «Հայաստանը որեւէ նախապայմանով չի գնացել այդ յարաբերութիւնների վերակսմանը, որը բացի դիւանագիտական կապերի հաստատումից ու սահմանա-

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍԸ ԴԻՄՈՒՄԸ ԵՆԻՍԿ-ԻՆ

Ընդդիմադիր Հայ ազգային կոնգրեսը Եւրախորհրդի խորհրդարանական վեհաժողովի Մոնիտորինգի յանձնաժողովին է ներկայացրել ծաւալուն փաստաթուղթ, որում մանրամասն ներկայացնելով իր մեկնաբանութիւնները յանձնաժողովի համազեկուցողներ Ջոն Պրեսկոտի եւ Ժորժ Կոլոմբէի դիտարկումների վերաբերեալ՝ վեհաժողովից պահանջում է չհանդուրժել «Հայաստանում 15 քաղաքատարկեաների առկայութիւնը» եւ նպատակ Մարտի 1-ի դէպքերի անկողմնակալ եւ վստահութիւններ շնչող քննութեանը:



յացուած լինեն իշխանութիւնները եւ ընդդիմութիւնը, պլիւս՝ անպայման ներկայացուած լինեն միջազգային էքսպերտներ»:

Ջուրաբեանը նաեւ տեղեկացրեց, որ ԵՆԻՍԿ-ում Հայ ազգային կոնգրեսի ներկայացուցիչ Արման Գրիգորեանը իրենց 24 կէտից բաղկացած դիտարկումները ներկայացրել է Մոնիտորինգի յանձնաժողովին: Յանձնաժողովում Հայաստանի պարտաւորութիւնների կատարման հարցի քննարկումը նախատեսուած էր երկուշաբթի օրը, սակայն հայաստանեան պատուիրակութեան մանդատների հաստատման հետ կապուած խնդիրների պատճառով յետաձգուեց:

Կոնգրեսը անհրաժեշտ է համարում քննութեան վերապահումը այնպիսի մարմնի, որտեղ իշխանութիւններն ու ընդդիմութիւնը կունենան հաւասար ներկայացուածութիւն, ընդգրկուած կը լինեն նաեւ միջազգային փորձագէտներ:

«Մենք կարծում ենք, որ Մարտի 1-ի իրադարձութիւնների բացայայտման հարցը դեռ լուծուած չէ, եւ մենք համարում ենք, որ դա ո՛չ կարող է անել տիրահաղթի նիկոյեանի այդ պարտական յանձնաժողովը [«Մարտի 1»-ի ժամանակաւոր խորհրդարանական յանձնաժողովը], ո՛չ էլ կարող է անել մարդու իրաւունքների պաշտպանը, որովհետեւ նա գտնուում է ակնյայտ ճնշումների ներքոյ, իշխանութիւնների ճնշումների տակ», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում յայտարարեց Հայ ազգային կոնգրեսի համակարգող Լեւոն Ջուրաբեանը. - «Ուստի մենք նորից շարունակում ենք պնդել, որ Մարտի 1-ի իրադարձութիւնների մասին ճշմարտութեան բացայայտման՝ պաշտօնական բացայայտման միակ երաշխիքը կարող է լինել, եթէ ստեղծուի լիազօր մարմին, որտեղ հաւասարապէս ներկա-

Հայ ազգային կոնգրեսի համակարգող ստեղծուած իրավիճակը եւ «Ժառանգութեան» ներկայացուցիչ Ջարուհի Փոստանջեանին ԵՆԻՍԿ-ում Հայաստանի պատուիրակութեան հիմնական կազմի անդամի կարգավիճակից զրկելը համարում է հայաստանեան պատուիրակութեանը կառավարելի դարձնելու փորձ, որի նպատակն է, ըստ նրա, փակել «Մարտի 1»-ի վերաբերեալ ճշմարտութիւնը վեհաժողովին հասցնելու ճանապարհները:

«Սա իշխանութիւնների հերթական ծաղրածուական կամ ժուլիկական քայլն է, որով նրանք փորձում են փակել Հայաստանից ճշմարտութիւնը Ստրասբուրգ հասցնելու բոլոր կանալները», - համոզուած է Լեւոն Ջուրաբեանը:

ՓԱՇԻՆԵԱՆԸ ԴԻՄԵԼ Է ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Երեւանի թիւ 10 ընտրատարած քում Յունուարի 10-ին անցկացուած Ազգային ժողովի պատգամաւորի լրացուցիչ ընտրութիւններում ընդդիմադիր թեկնածու, 2008 թուականի յետընտրական իրադարձութիւնների առնչութեամբ օրերս 7 տարուայ ազատազրկման դատապարտուած «Հայկական ժամանակ» օրաթերթի գլխաւոր խմբագիր Նիկոլ Փաշինեանը Հինգշաբթի օրը իր ներկայացուցչի միջոցով դիմել է Սահմանադրական դատարան՝ պահանջելով անվաւեր ճանաչել «կեղծուած քուէարկութիւնը»:

Ընդդիմադիրներից բացի, միջազգային եւ տեղական դիտորդները եւս պնդում են, թէ ընտրութիւններն ուղեկցուել են խախտումներով եւ բռնութիւններով: Չնայած այդ պնդումներին, ընտրատարած քայլին ընտրական յանձնաժողովը բաւական հապճեպ կարգով անցած շաբաթ ամփոփեց ընտրութիւնների արդիւնքներն ու յաղթող ճանաչեց «Ազգային միաբանութիւն» կուսակցութեան ներկայացուցիչ Արա Միմոնեանը:

Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելուց ժամեր առաջ թիւ 10 ընտրատարած քայլին ընտրական յանձնաժողովը (ԸԸՀ) որոշեց մերժել Նիկոլ Փաշինեանի նախընտրական շտաբի ներկայացուցիչ Պատուական Յովակիմեանի դիմումը ընտրութիւններն անվաւեր ճանաչելու մասին: Որոշումը կայացուեց քուէարկութեան 7 կողմ, մէկ դէմ արդիւնքով՝ միակ դէմ քուէարկողը ԸԸՀ-ում ընդդիմադիր «Ժառանգութիւն» կուսակցութեան ներկայացուցիչն էր:

2009-Ի ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆԿՈՒՄԸ ԿԱԶՄԵԼ Է 14,4%

Ըստ ազգային վիճակագրական ծառայութեան օպերատիւ տուեալների, ՀՀ ՀՆԱ տարեկան անկումը կազմել է 14,4%: Արձանագրուել է արդիւնաբերական արտադրանքի ծաւալի նուազում 7,8%-ով, էլեկտրաէներգիայի արտադրութեան՝ 7,2%-ով, գիւղատնտեսութեան համախառն արտադրանքի ծաւալի՝ 0,1%-ով, շինարարութեան ծաւալի՝ 36,4 %-ով, արտաքին առեւտրաշրջանառութեան՝ 27%-ով: Արտահանման ծաւալները տարեկան կտրուածքով պակասել են 34%-ով, իսկ ներմուծման ծաւալները՝ 25,3% -ով: Աճ է գրանցուել մանրածախ առեւտրի շրջանառութեան ոլորտում՝ 1% եւ ծառայութիւնների ծաւալի (առանց առեւտրի)՝ 1,3%: Պաշտօնապէս գրանցուած գործազուրկների աճի տեմպը կազմել է՝ 113,1 % կամ 82.900 մարդ: Դրամի փոխարժէքը ԱՄՆ դոլարի նկատմամբ միջինը կազմել է 363,28 դրամ:

ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ

Սերժ Սարգսեանն Յունուար 26-ին ընդունել է Վրաստանի վարչապետ Նիկա Գիլաուրիին: Նա Երեւանում է հայ-վրացական տնտեսական համագործակցութեան միջկառավարական յանձնաժողովի 8-րդ նիստին մասնակցելու նպատակով: Սերժ Սարգսեանի խօսքով. «Մենք բարի հարեւաններ ենք եւ պէտք է յաճախ շփուենք՝ քննարկելու բոլոր այն հարցերը, որոնք երբեմն ծագում են: Մեր համագործակցութեան ծաւալը, յարաբերութիւնների մակարդակն այնպիսին է, որ մեզ ուղղակի պարտաւորեցնում է աշխատանքային կարգով ամէն օր անդրադառնալ այդ հարցերին: Մենք Վրաստանը համարում ենք եղբայրական, բարեկամական երկիր եւ պատրաստ ենք աւելի խորացնել մեր յարաբերութիւնները»:

Վրաստանի կառավարութեան ղեկավարն իր հերթին փոխանցել է Միխայիլ Սաակաշվիլիի բարեմաղթանքները եւ Վրաստան այցելելու հրաւերը: Խօսելով հայ-վրացական տնտեսական համագործակցութեան միջկառավարական յանձնաժողովի նիստի մասին, Վրաստանի վարչապետն ասել է. «Մենք քննարկել ենք բազմաթիւ խնդիրներ. ենթակառուցուածքային, մշակութային, սոցիալական եւ այլ բնույթի ծրագրեր եւ քննարկուած գրեթէ բոլոր հարցերի վերաբերեալ եկել ենք պայմանաւորուածութիւններին»: Այս մասին տեղեկացնում է ՀՀ նախագահի մամուլի գրասենեակը:

«ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ» ԳԻՐՔԸ ԼՈՅՍ Է ՏԵՍԵԼ ՆԱԵՒ ԹՈՒՐՔԵՐԵՆ

Յունուար 26-ին Թէքէեան մշակութային կենտրոնում կայացաւ «Հայոց Յեղասպանութիւն» 10 լեզուներով լոյս տեսած գրքի շնորհանդէսը: Գրքի հեղինակը ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր Նիկոլայ Յովհաննիսեանն է: Գիրքը լոյս է տեսել 300 տպաքանակով: Ի թիւս անգլերէն, ֆրանսերէն, արաբերէն, պարսկերէն, ճափոներէն եւ այլ լեզուների, այն լոյս է տեսել նաեւ թուրքերէնով:

«Իմ առաջին աշխատութիւնը նուիրուած Հայոց Յեղասպանութեանը լոյս է տեսել 1965թ.-ի Մարտին: Այս ընթացքում ես աշխատել եմ նաեւ այլ խնդիրների վրայ՝ կապուած Մերձաւոր Արեւելքի, Արաբական աշխարհի, Ղարաբաղի, այնպէս եմ իմ աշխատանքները դասաւորել, որ մշտապէս ներկայ է եղել Յեղասպանութեան հարցը», - նկատեց հեղինակ Ն. Յովհաննիսեանը:

Ի դէպ, այս հարցը հեղինակի համար նաեւ անձնական ցաւ է, նրա մայրը Չարդից փրկուածներից է: Ինչո՞վ է տարբերում այս նոր հրատարակութիւնը նախկինում Յեղասպանութեան վերաբերեալ եղած գրքերից: «Այս գրքում առաջնորդուել ենք՝ «Առանց լացկանութեան» կարգախօսով: Դա մեր պատմագրութեան թերութիւններից մէկն է: Մեր պատմութեան ամենաուղեղնական էջերը ներկայացրել ենք արժանապատուօրէն», - ասաց հեղինակը: «Այն, ինչպէս ասաց իմ հրեայ բարեկամներից մէկը, «համազարկ է Թուրքիային», - եզրափակեց Ն. Յովհաննիսեանը:

ԼՈՒՐԵՐ

ԵՆԽԻՎ-Ն ՂԵԿԱՎԱՐԵԼՈՒ Է ԹՈՒՐՔ ՊԱՏԳԱՍԱԽՈՐԸ

Յունուարի 25-ից Ենխիվ նախագահն է թուրքական պատուիրակության ղեկավար Մեւլութ Չավուշօղլուն: Նա այս պաշտոնում է ընտրուել այսօր՝ Ենխիվ ձմեռային նստաշրջանի բացման օրը: Չնայած «ընտրութիւն» ասածը յարաբերական էր, քանի որ նա միակ թեկնածուն էր:

Համաձայն գործող կարգի՝ առաջիկայ երկու տարիներին Ենխիվ յաջորդ նախագահը պետք է լինի «Եւրոպական ժողովրդավարներ» խմբի անդամ: Իսկ խմբի միակ թեկնածուն Մեւլութ Չավուշօղլուն էր:

Ենխիվ նորընտիր նախագահը այսօր՝ տեղական ժամանակով 12.30-ին, պատասխանելու է լրագրողների հարցերին:

Յիշեցնենք, որ Մեւլութ Չավուշօղլուն նախորդ տարու աշնանը «Ա1+»-ի հետ գրոյցում հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորումը գովակեցել էր ԼՂ հիմնախնդրի հետ:

«Ա1+» -ի դիտարկմանը՝ թէ հայ-թուրքական երկկողմ արձանագրութիւններում չկայ Ղարաբաղեան հիմնահարցի մասին դրոյթ՝ պարոն Չավուշօղլուն նշեց. «Ինչո՞ւ ենք մենք փակել սահմանը. հայ-ադրբեջանական խնդրի պատճառով: Դուք ասում էք՝ անվտանգութեան գոտի, բայց մենք կարող ենք տեսնել մի քանի որոշումներ, որոնք ասում են՝ գրաւեալ տարածքներ, ուստի մենք սահմանը փակել ենք հենց այս պատճառով»:

Պոլսոյ Հայոց համապատրիարքի ընտրութիւններ շուրջ ծագած են վեճեր

Թուրքիոյ Հայ համայնքին ներս կը տիրէ անհանգիստ վիճակ համապատրիարքի ընտրութիւններու շուրջ ծագած տարակարծութիւններուն պատճառաւ, որ նաեւ առիթ տուած է թրքական մամուլին բացասական երանգով արտայայտուելու Հայերու նկատմամբ:

Պոլսոյ Հայոց պատրիարք Մեսրոպ Մուսթաֆեանի երկարատեւ հիւանդութեան պատճառաւ որոշուած էր կալցանել ընտրութիւններ աթոռակից պատրիարք, ընտրելու համար:

Այս կապակցութեամբ Պոլսոյ Հայոց պատրիարքարանի Հոգեւոր Խորհուրդի առաջնորդ Արք. Արամ Աթէշեան 2009-ի Նոյեմբեր 6-ին հանդիպում ունեցաւ Թուրքիոյ վարչապետի հետ եւ տեղեկացուց այդ մտադրութեան մասին, իսկ Դեկտեմբերի սկզբին Աթէշեան, պատրիարքարանի ներկայացուցիչներու հետ այցելելով Իսթանպուլի նահանգապետ Մուսթաֆա Գիւլըրին յանձնեց համա-



Ենխիվ նոր նախագահ Մեւլութ Չավուշօղլուն

թեան գոտի, բայց մենք կարող ենք տեսնել մի քանի որոշումներ, որոնք ասում են՝ գրաւեալ տարածքներ, ուստի մենք սահմանը փակել ենք հենց այս պատճառով»:

«Ենթադրենք՝ մենք բացում ենք սահմանը: Ամէն ինչ լաւ է, բայց վաղը ինչ-որ բան է տեղի ունենում Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ. Թուրքիան ստիպուած կը լինի նորից փակել սահմանը. դե, դուք գիտէք մեր յարաբերութիւնները Ադրբեջանի հետ», - աւելացրել էր նա:

պատրիարքի ընտրութիւններ կալցանելու դիմումը: Ապա, կազմուեցաւ համապատրիարքի ընտրութեան Նախաձեռնող Խումբը: Սակայն, ի յայտ եկած է որ Նախաձեռնող Խումբը իր հերթին առանձին դիմած է Պոլսոյ նահանգապետարան, բայց ոչ թէ համապատրիարք՝ այլ պատրիարք ընտրելու թոյլտուութեան համար:

Ըստ թրքական «Հիւրիէթ» թերթին, Հայոց պատրիարքարանի Հոգեւոր Խորհուրդը իր անհանգստութիւնը յայտնած է, որ Նախաձեռնող Խումբը դիմած է ոչ թէ համապատրիարք, այլ պատրիարք ընտրելու համար եւ դիտելու տուած է, որ նման զարգացումները կը հակասեն հայկական 1700 ամեայ եկեղեցւոյ ականջոյթներուն:

Հոգեւոր խորհրդի հաղորդագրութեան մէջ նշուած է, որ ընտրութիւնները առողջ մթնոլորտի մէջ անցնելու համար անհրաժեշտ է, որ Հոգեւոր Խորհուրդը եւ Նախաձեռնող Խումբը համագործակցին իրար հետ:

ՄԻԱՅԵԱԼ ՆԱՅԱՆԳՆԵՐԸ ԴՐԱԿԱՆ ԳՆԱՅԱՏԵՑ

Շարունակուած էջ 1-էն

իոց մտահոգութիւնները՝ Հայաստանի Սահմանադրական Դատարանի վճռի կապակցութեամբ, յայտնելով, որ այդ կը հակասէ «արձանագրութիւններու էութեան եւ ոգիին»:


Հայաստանի արտաքին գործոց նախարար էդուարդ Նալբանդեան, հակադարձելով Թուրքիոյ կողմէ բարձրացած Սահմանադրական Դատարանի որոշումի կապակցութեամբ բարձրացած աղմուկին, մտահոգութիւն յայտնեց, որ հայ-թրքական յարաբերութիւններու բարելաւման գործընթացը կրնայ ձախողիլ, եթէ Թուրքիա պատրաստ չըլլայ արձանագրութիւններու վաւերացման եւ շարունակի, ինչպէս կ'ընէ մինչեւ այսօր՝ նախա-

պայմաններու լեզուով խօսիլ եւ խոչընդոտել յառաջընթացը:

«Ասել, թէ Հայաստանը ձգտում է վաւերացման գործընթացը՝ դա էլ է անհեթեթութիւն: Մենք յուսով ենք, որ թուրքերը չեն փորձի արհեստական, յօրինուած պատրուակներ բերել որպէս պատճառ այս արձանագրութիւնները չվաւերացնելու համար», - ըսաւ էդուարդ Նալբանդեան:

Հակառակ Միացեալ Նահանգներու եւ Հայաստանի տուած պատասխաններուն, Թուրքիա կը շարունակէ պնդել որ բացատրութիւններ կ'ակնկալէ Հայաստանէն՝ հայ-թրքական արձանագրութիւններու ավելութեամբ Սահմանադրական դատարանի կալցուցած որոշումի շուրջ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՅԼԵԻՍ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԱՏԱՐԸ ԶԷ



«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՕ»: «Տնտեսական ազատութիւնների մակարդակով Հայաստանը այլեւս տարածաշրջանի առաջատարը չէ», - փաստում է ամերիկեան Heritage հիմնադրամի եւ հեղինակաւոր Wall Street Journal պարբերականի ամենամեայ գեկոյցը:

Եթէ 2009 թուականին հրապարակուած գեկոյցի համաձայն՝ տնտեսական ազատութիւնների մակարդակով Հայաստանը աշխարհի 180 պետութիւնների թւում 31-րդն էր, ապա այս տարի նահանջել է 7 կէտով՝ յայտնուելով 38-րդ տեղում: Հարեւան վրաստանը, որը նախորդ տարիներին միշտ գիշում էր Հայաստանին, այս մի հետագոտութեան համաձայն արդէն 26-րդն է:

Ամերիկացի վերլուծաբանների համոզմամբ՝ կոռուպցիան այն զլխաւոր գործօնն է, որ խոչընդոտում է Հայաստանում բիզնեսի ազատ ծաւալմանը: «Կոռուպցիան լայնօրէն տարածուած է բոլոր մակարդակներում եւ ոլորտներում: Կառավարական պաշտօնեաների կողմից կաշառքի պահանջները ընկալում են որպէս սովորական երեւոյթ: Կառավարութեան հետ կապուած գործարարները վերահսկում են Հայաստանի համար կենսական նշանակութիւն ունեցող մի շարք ապրանքատեսակների ներկրումը», - գրում են գեկոյցի հեղինակները:

Նրանց պնդմամբ՝ Հայաստանում տնտեսական ազատութիւնների ընդհանուր մակարդակի նուազման պատճառներից մէկը նաեւ սեփականութեան իրաւունքի թոյլ

պաշտպանուածութիւնն է. - «Սեփականութեան իրաւունքի պաշտպանութեան մակարդակով 2009 թուականին Հայաստանը աշխարհի 115 պետութիւնների թւում 98-րդ տեղում էր: Մտաւոր սեփականութեան պաշտպանութեան մակարդակով Հայաստանը աշխարհում ամենացածր ցուցանիշն ունէր: Ստեղծուած կացութեան պատճառներից մէկը դատական համակարգի թերզարգացած եւ կոռուպացուած վիճակն է, ինչն էլ, իր հերթին, խոչընդոտում է կնքուած գործարքների իրագործմանը»:

Հիմնադրամի մասնագէտները նաեւ նշում են, որ Հայաստանի ֆինանսական շուկան դեռ բաւական թոյլ է: «Կապիտալի եւ ապահովագրութեան շուկաները վերջնականապէս դեռ չեն ձեւաւորուել: Տեղական բանկերը սահմանափակ արտաքին ազդեցութիւն ունեն, այդ իսկ պատճառով էլ համաշխարհային տնտեսական ճգնաժամը ցնցումների չհանգեցրեց», - ասուած է գեկոյցում:

Ամերիկացի փորձագէտները քննադատել են նաեւ կառավարութեան կողմից սուբսիդաւորմանն ուղղուած քայլերը, նշելով, թէ «կառավարական յատկացումների պատճառով հանրային տրանսպորտի, գազի եւ էլեկտրաէներգիայի իրական գները որոշակիօրէն խեղաթիւրուել են»: Այդ իսկ պատճառով, գեկոյցի հեղինակները որոշել են 10 կէտով նուազեցնել Հայաստանի ցուցանիշը դրամա-ֆինանսական ազատութիւնների ոլորտում:

ԵԱՀԿ ՄԻՆՍԿԻ ԽՄԲԻ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՐՆԵՐԸ ՅԱՆՁՆԱԾ ԵՆ ՄԱԴՐԻԴԵԱՆ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐՈՒ ՆՈՐԱՑՈՒԱԾ ՏԱՐԲԵՐԱԿԸ

ԵԱՀԿ Մինսկի խմբի համա- նախագահները Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահներին են յանձնել Մադրիդեան սկզբունքների նորացուած տարբերակը: Այդ մասին ասում է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների Աստանայում արուած հերթական յայտարարութեան մէջ:

«Յունուարի 20-ին ԵԱՀԿ Մինսկի խմբի համաձայնագրողներ Եւրոյի Մերգլյակովը, Բեռնար Ֆասիէն եւ Ռոբերտ Բրադտկէն Երեւանում հանդիպել են Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանի հետ: Իրենց նախագահների՝ 2009 թուականի Յուլիսին Ակվիլում տուած յանձնարարութեանը համապատասխան համանախագահները նախագահ Սարգսեանին, ինչպէս նաեւ Դեկտեմբերին Ադրբեջանի այցի ժամանակ նախագահ Ալիեւին են յանձնել Մադրիդեան փաստաթղթի նորացուած տարբերակը, որը ներա-

ռում է հիմնարար սկզբունքների նոր ձեւակերպումներ: Յունուարի 21-ին համանախագահները Բաքուում հանդիպել են նախագահ Ալիեւի հետ: Համանախագահների հետ իրենց գրոյցներում թէ Սարգսեանը, թէ Ալիեւը լուրջ պատրաստակամութիւն են յայտնել շարունակելու բանակցութիւնները Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան խողովակաւորութեան շուրջ: Համանախագահները մեկնել են Աստանա Ղազախստանի կառավարութեան հետ խորհրդատուութիւնների համար՝ որպէս ԵԱՀԿ գործող նախագահի: Աստանայից յետոյ խորհրդատուութիւնները կը շարունակուեն Սոչիում, որտեղ Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւի հրաւերով կը կայանայ Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հերթական հանդիպումը», - նշում է յայտարարութեան մէջ:

ԼՈՒՐԵՐ

ՊԵՅՐՈՒԹԵՆ ԱՏԻՍ ԱՊԵՊԱ ՄԵԿՆՈՂ ԻՆՔՆԱԹԻՌ ՄԸ ՋԱԽՋԱԽՈՒԵՑԱԻ ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆԻ ՋՈՒՐԵՐՈՒՄ ՄԵՋ



Լիբանանցիները երկուշաբթի առաւօտեան արթնացան մարդկային ծանր աղէտի մը գոյժով: Պէյրուսի միջազգային օդակայանէն Ատիս Ապեպա մեկնող Ethiopian Airlines ընկերութեան Boeing-737 տիպի ինքնաթիռ մը, թռիչքէն մօտաւորապէս հինգ վայրկեան ետք անհետացաւ ռատիոհաղորդիչ սարքաւորումներուն տեսադաշտէն: Օդանավը ջախջախուեցաւ Միջերկրական ծովուն մէջ:

Ըստ պաշտօնական տուեալներու՝ ինքնաթիռը կը փոխադրէր 82 ուղեւոր եւ անձնակազմի 9-ը անդամ: Ուղեւորներէն 51-ը լիբանանցիներ, 23-ը եթովպացի, երկու բրիտանացի մը, իրաքցի մը, թուրք մը, սուրիացի մը, գանատացի մը, ռուս մը եւ Ֆրանսացի մը, որ հետագային պարզուեցաւ, որ Լիբանանի մօտ Ֆրանսայի դեսպանին կիներ էր: Լիբանանեան իշխանութիւնները անմիջապէս հրահանգեցին սկսիլ փրկարար աշխատանքներուն:

Հաղորդակցութեան եւ փոխադրութեան նախարար Ղազի Արիտի յայտարարեց, թէ արկածը պատահած է Պէյրուսէն ինը քիլոմէթր հարաւ գտնուող, Նաամէ գիւղէն երեք քիլոմէթր հեռավորութեան գտնուող Միջերկրականի ջուրերուն մէջ: Շրջանի բնակիչն էրէն ոմանք յայտնեցին, թէ առա-

ւօտեան կանուխ ժամերուն ջուրերուն մէջ նկատած են ինքնաթիռի կտորներ: Նախարար Արիտի յայտնեց, թէ կառավարութիւնը անմիջապէս կազմած է հետաքննիչ յանձնախումբ մը՝ ուսումնասիրելու պատահարին պատճառները: Հանրապետութեան նախագահը Միշէլ Սըլէյման, պաշտպանութեան նախարար Իլիաս Մըր, բանակի ընդհանուր հրամանատար զօրավար Ժան Քահուաճի անմիջապէս ժամանեցին Պէյրուսի միջազգային օդակայանը՝ աւելի մօտէն իրազեկ դառնալու արկածին մանրամասնութիւններուն:

Հանրապետութեան նախագահը եւ պաշտպանութեան նախարարը միասնաբար տուին մամլոյ ասուլիս մը, որուն ընթացքին նախագահ Սըլէյման իր ցաւակոտ թիւնները փոխանցեց զոհերու ընտանիքներուն՝ նշելով, որ փրկարար աշխատանքներ կը կատարուին վերապրողներ գտնելու ակնկալութեամբ: Նախագահը բացառեց ինքնաթիռի արկածը խափանարարական աշխատանքի մը հետեւանքը ըլլալու հաւանականութիւնը՝ աւելցնելով, որ լիբանանեան բանակի միաւորներ յառաջիկայ 72 ժամերուն ընթացքին պիտի շարունակեն վերապրողներ գտնելու աշխատանքները:

ՄԵԾՆ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՄԵՋ ԱՅԱԲԵԿՉՈՒԹԵԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԲԱՐՁՐԱՑԱԾ Է

Մեծ Բրիտանիայի իշխանութիւնները անցող տարուայ Յուլիսէն սկսեալ առաջին անգամ ահաբեկչութեան մակարդակն այդ երկրին մէջ «լրջութեան» աստիճանի բարձրացած են:

Ինչպէս կը յայտնէ BBC-ն, նման որոշում կայացած է ահաբեկչական գործողութիւններու վերլուծումով զբաղուող միացեալ կեդրոնը:

Ինչպէս կը յայտնէ ՆԳՆ ղեկավար Ալըն ձոնսընը, նմանօրինակ միջոցառումները կապուած չեն վերջերս Տիթրոյի մէջ տեղի ունեցած դէպքերուն հետ, երբ ահաբեկիչը փորձած էր պայթեցնել Ամստերտամէն ժամանող ինքնաթիռը: Միեւնոյն ժամանակ ան կոչ է ըրած է քաղաքացիներուն ուշադիր ըլլալ եւ օգնել ոստիկանութեան եւ յատուկ ծառայութիւններուն աշխատակիցներուն: Ինչպէս նշած է ձոնսընը, այս պահին որեւէ յատուկ դէպքի մասին խօսք չկայ: Ահաբեկչութիւններու վտանգաւորութեան աստիճանը որոշող նշանաձողին վրայ գոյութիւն ունին



հինգ աստիճաններ, փոքրէն մինչեւ ամենաճգնաժամանայինը: Բարձրագոյնէն առաջ ալ գոյութիւն ունի «լուրջ աստիճանը» որ կը նշանակէ թէ Միացեալ Թագաւորութեան ահաբեկչութեան հաւանականութեան մակարդակը շատ բարձր է:

ՀԱՅԻԹԻ ՄԵՋ ԴԱԴԱՐԵՑՈՒԱԾ ԵՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ-ՈՐՈՆՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԵՐԿՐԱՇԱՐԺԵՆ 11 ՕՐ ԱՆՑ ՀՐԱՇՔՈՎ ՍԱՐԴ ՓՐԿՈՒԱԾ Է



Հայիթիի աւերիչ երկրաշարժէն 11օր անց փրկարարներուն յաջողութիւնն է փրատակներուն տակէն կենդանի մարդ դուրս բերել: Ասոյից յետոյ փրկէս գործակալութեան հաղորդումով, հրաշքով փրկուած է Փորթ-օ-Փրէնսի 24 ամեայ բնակիչ Ուիլսոնը Էկգանտուսը. վերջինս աղէտի պահին գտնուած է իր աշխատավայրին՝ Napoli Inn հիւրանոցին մէջ գտնուող նպարեղէնի խանութին մէջ, այդ իսկ պատճառով տասն օր շարունակ սննդի կարիք չէ զգացած: Շուրջ երկուսուկէս ժամ շարունակուած որոնողական աշխատանքները իրականացուած են Ֆրանսացի, ամերիկացի եւ յոյն փրկարարները:

Յունուար 12-ի աղէտալի երկրաշարժի հետեւանքով աւերուած Հայիթիի մէջ Շաբաթ օրը դադարած են փրկարարական-որոնողական աշխատանքները: Միացեալ Ազգերու կազմակերպութեան տուեալներով, փրատակներուն տակէն փրկուած են 132 մարդ:

Աղէտէն յետոյ շուրջ 2 հազար փրկարարներ մասնակցած են Հայիթիի Հարաւը աւերուած քաղաքներու եւ գիւղերու մէջ որոնողական աշխատանքներուն, յուսալով աւերակներէն դուրս բերել կենդանի մնացած մարդկանց:

Այժմ իշխանութիւններու եւ մարդասիրական առաքելութիւններու բոլոր ջանքերը պիտի

կեդրոնացուին աղէտէն տուժածներու մթերքով, ջուրով եւ ծածկով ապահովելու ուղղութեամբ:

Երկրաշարժի պատճառով նախնական տուեալներով գոհուած են առնուազն 150 հազար մարդ: Աղէտէն տուժածներու թիւը կարող է հասնիլ 3 միլիոնի:

Միջազգային փորձագէտներու գնահատումով՝ երկրաշարժէն աւերուած Հայիթիի վերականգնման համար կը պահանջուի 10-15 տարի: Առաւել յոռետեսական գնահատականներով՝ Հայիթիի վերականգնման համար չի բաւականացնէր նոյնիսկ 25 տարին:

Միւս կողմէ անցիալ շաբաթ «Յոյս Հայիթիին հենց հիմա» խորագրով համաշխարհային հեռուստամարտի միջոցով հանգանակուած է 57 միլիոն տղար: Դերասան ձորճ Քլունիի նախաձեռնութեամբ եւ շուրջ 140 աստղերու մասնակցութեամբ կատարուած մարտիչներ Ուրբաթ օրը հեռարձակուած է Լոս Անճելըսէն, Նիւ Եորքէն եւ Լոնտոնէն: Երկու ժամ տեւած մարտի մասնակիցներուն մէջ կային աշխարհահռչակ աստղեր Մատոննան, Պէյոնսէն, Պոնոն, Սթիւարթ, Քրիստինա Ալիւլեան, Ալիշա Քիսը, ձաթիւն Թիմպլըթը, Շաքիրան, տամնակայ Նանթալայա երաժիշտներ, դերասաններ Պրէթ Փիթը, Անճելինա ձոյլին, Լէնապրո Տի Քաբրիոն, ձուլիս Ռոպերթը եւ այլք:

ԹՈՒՐՔԻՈՅ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ «ԽԱՂԱՂՈՒԹԻՄ ԵՒ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹԻՄ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ ԱՅՅԵԼԱԾ ԵՆ ՊՈԼՍՈՅ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ

Թուրքիոյ խորհրդարանի միակ քրտամէտ «Խաղաղութիւն եւ Ժողովրդավարութիւն» կուսակցութեան (նախկին, Ժողովրդավարական Հասարակութիւն կուսակցութիւն) անդամները այցելած են Ստամպուլի մէջ Հայոց եւ Յունաց պատրիարքարաններ:

Թրքական Haber լրատուական գործակալութեան փոխանցմամբ Հայոց պատրիարքարան այցելած են կուսակցութեան խորհրդարանական խմբակցութեան ղեկավար Նուրի Եամանը, պատգամաւորներ Սեբասթ թունըլը, Ուֆուք Ուրասը, Աքըն Բրդալը եւ կուսակցութեան Ստամպուլի նահանգային ղեկավար Հուսէյն Բարըը:

Պոլսոյ Հայոց պատրիարքարան այցելող հիւրերուն դիմաւորեր են

Պատրիարքարանի Հոգեւոր խորհուրդի առաջնորդ Արամ Արք. Աթէշեանը:

Մամուլի համար փակ հանդիպումէն յետոյ Նուրի Եամանը նշեր է. Մեր համայնքներու ղեկավարներու եւ տարբեր հասարակական կազմակերպութիւններու հետ սկսած ենք աշխատիլ, որ Թուրքիոյ մէջ ապրող բոլոր ժողովուրդներու, հալածեալներու, արտաքուստներու եւ այլոց խնդիրները տեղափոխենք Թուրքիոյ խորհրդարան: Հանդիպելով հայ եւ յոյն համայնքներու ղեկավարներու մասին համայնքներու տեղեկանալ, նշած է «Խաղաղութիւն եւ Ժողովրդավարութիւն» կուսակցութեան խորհրդարանական խմբակցութեան ղեկավար Նուրի Եամանը:

**ՎԵՐԼՈՒԹՈՒԹԻՒՆ**

**ՈՍՏԻԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԵՐԸ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ - ՅԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՓՈԽՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ ԲԱՐՈՅԱԹԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՕՆԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ**

**ԱՐՄԻՆԷ ՂԱԶԱՐԵԱՆ**  
(Ռազմավարական եւ ազգային հետազոտութիւնների հայկական կենտրոնի փոքրագետ)

«Աշխատեք կատարել ձեր պարտքը եւ շուտով կ'իմանաք՝ արդեօք ի՞նչ էք ներկայացնում ձեզ գահից: Իսկ ո՞րն է ձեր պարտքը: Ամենօրեայ պահանջները...»

Կեօթ

Վերջերս խորանում, արմատանում են բացասական դիրքորոշումներն ու վերաբերմունքը ոստիկանութեան եւ, առհասարակ, պետական համակարգի հատուկ ծառայողների ու ծառայողների նկատմամբ: Յայտնի է, որ յատուկ ծառայողները իշխանութեան արտաքին եւ ներքին քաղաքականութեան գործիքն են. ներքաղաքական ներկայ լարուած վիճակում այդ «գործիքը» ոստիկանութիւնը, փութաջանօրէն օգտագործւում է շատ բազմաբնոյթ, ամենատարբեր գործողութիւններով: Գործիքի տէրը՝ իշխանութիւնը, ոչ միայն խնամքով չի վերաբերւում այն «օգտագործելիս», անգամ մեծ շահարկումների քառութեան նոխագ է դարձրել: Յիշենք նախընտրական ժամանակահատուածը, երբ հասարակութեան մէջ սփռել էին «վախի» գործօնը՝ արտայայտուելու նախընտրելի թեկնածուի մասին, Փետրուարի 19-ի ակտիւ եւ ազդեցիկ գործողութիւնները, վերջապէս՝ հետընտրական հանրահաւաքների ժամանակ նրանց պահուածքը եւ Մարտի 1-ի ողբերգական դէպքերը:



«Անկախ դարաշրջանից, հասարակական կարգից եւ աշխարհաքաղաքական վիճակից՝ կարելի է առանձնացնել յատուկ ծառայողների գործունէութեանն եւ զարգացմանը ազդող 3 օբյեկտիւ գործօններ.

- 1. Տնտեսական
- 2. Բարոյաթիկական
- 3. Իրաւական

Բոլոր երեք գործօնները միմեանց հետ փոխկապակցուած են, աչնուամենայնիւ, յետագայ վերլուծութեան համար առանձնացնենք մէկը՝ բարոյաթիկականը, «որ հիմնուած է տուեալ հասարակութեան մէջ՝ մշակութային արժէքներին համապատասխան ձեւաւորուած արժեքներին վրայ: Ժամանակակից աշխարհում գոյութիւն ունի յատուկ ծառայողների եւ նրանց գործողութիւնների նկատմամբ պատմականօրէն ձեւաւորուած վերաբերմունք՝ հասարակութեան ընտրախաւի բարոյաթիկական նորմերի հիման վրայ: Դրանք, այսպէս կոչուած, արեւմտեան (եւրոպական) եւ արեւելեան (ասիական) մօտեցումներն են: Արեւմտեան մօտեցումը յատուկ ծառայողներին եւ նրանում աշխատող անձանց նկատմամբ բացասական է. միջնադարեան Եւրոպայում յատուկ ծառայողների եւ նրանց աշխատակիցների նկատմամբ ձեւաւորուել է արհամարհական, անհարգալից վերաբերմունք, Արեւելքում՝ ընդհակառակը, դրական կամ, ծայրայեղ դէպքում, չեզոք վերաբերմունք: Արեւմտեան մօտեցումն այսօր էլ կայսերական Ռուսաստան, այնտեղից էլ՝ Խորհրդային Միութիւն, որտեղից էլ ժառանգութիւն է մնացել մեր հասարակութեանը:

Յիշենք մտաբերենք վերջին մի քանի տարիները, ապա ոստիկանութիւնն այդ շրջանում անգոչն, անդէմ կեցուածք ունէր եւ չէր ընդգծուել հասարակական կեանքում, կարծես իր վրայ յատուկ յուշակական ուշադրութիւն չէր պահանջուում: Բայց պատմականօրէն ձեւաւորուած եւ իւրաքանչիւր ժամանակաշրջանի արժէքային համակարգին յարիւր այդ բացասական մօտեցումը գոյութիւն ունի եւ առաւել ընդգծուել է նման վարչակարգով պետութեան ցանկացած գործառութեան ժամանակ, երբ յատուկ ծառայողները պաշտպանում են վարչախմբի շահերը՝ հակադրելով հասարակութեան մեծամասնութեան, ժողովրդի շահերին: Այսինքն, իշխանութեան կողմից կատարուող ցանկացած գործառութեան գործիք լինելով, բնականաբար, վատ են ընկալուում հասարակութեան կողմից, քանի որ այդ պահպանողող իշխանութիւնը չունի համաժողովրդական վստահութիւն: Այսինքն՝ նախադէպ եւ այլ նախապայմաններ էլ պէտք չեն, որպէսզի ոստիկանութիւնն անմիջապէս ընկալուի բացասական «չերտ»: Դրանից յետոյ արդէն «գործողութիւններով» (քանի որ գործիք է) հաստատուում է իր «լուսանցքային» կարգավիճակը:

Առաջին՝ այդ տեսակէտը (արեւմտեան) Եւրոպայից անցել է կայսերական Ռուսաստան, այնտեղից էլ՝ Խորհրդային Միութիւն, որտեղից էլ ժառանգութիւն է մնացել մեր հասարակութեանը: Երկրորդ՝ Խորհրդային Միութիւնը ստեղծուել է կոմունիստական կուսակցութեան ներկայացուցիչների՝ բոլշեւիկների կողմից, որոնք երկու տասնեակ տարիներ հետապնդուում էին (նրանք եղել են ընդլայնուող) յատուկ ծառայողների կողմից եւ, բնականաբար, յատուկ ծառայողների հանդէպ ունէին խիստ բացասական վերաբերմունք:

Երրորդ, որը կ'անուանենք «37 թուականի բարդոյթ»։ ԽՍՀՄ-ում համատարած հետապնդումները, հալածանքները, գնդակահարութիւնները, աքսորը իշխանութեան կողմից իրականացուում էին յատուկ ծառայողների միջոցով մինչեւ 1953թ., եւ քանի որ մեծ թուով նշանաւոր, երեւելի մարդիկ գնդակահարուել, աքսորվել են 1937թ.-ին, ապա ժողովրդի մէջ այդ թուականը տպաւորուել է որպէս խորհրդայնի: Այդ բարդոյթի բովանդակութիւնը վախն է, սարսափը, որը զենտիկորէն նստած է սերունդների մէջ»:

Այսպիսով, գոյութիւն ունեցող արժէքային համակարգը, վերաբերմունքները պատմա-մշակութային, քաղաքական իրադարձութիւնների ծանր ժառանգութեան եւ հասարակական կեանքում եւ ներկայ սոցիալ-քաղաքական իրադարձութիւններով:

Մեր օրերում արժէքային համակարգի տարաբնոյթ փոփոխութիւնները, հասարակական կեանքում զլոբալացման գործընթացները որեւէ կերպ չեն ազդում յատուկ ծառայողների նկատմամբ վերաբերմունքի դրական փոփոխութիւններին՝ յատկապէս ի դէմս ոստիկանութեան: Աւելին՝ գնալով «ամրապնդուում» է որպէս ոչ իւրային, մերժող շերտ եւ որպէս առանձին բացասական կարծրատիպ սկսել է ընդլայնուել՝ ընդգրկելով համանման կերպարներ՝ հարկային եւ մաքսային ծառայողների աշխատակիցներ:

From my viewpoint, there is one fundamental flaw in the Protocols. As a form of a contract, or an international convention, the flaw is that there is no stipulation of penalty if one or both parties involved violate the terms. In the Protocols there is nothing to stop Turkey, the stronger party from closing the border a day after implementation. This is my problem with the process, not the policy. It also probably reflects the lack of negotiating skills on the Armenian side.

*Hrant Dink once referred to the Genocide as Turkey's greatest “taboo” that the society needed to address. You're involved in projects seeking to build bridges between segments of the society here and in Turkey. Lately film makers, journalists and others have made the trip from Istanbul to Yerevan and vice-versa. Do these programs make a difference in terms of breaking down the stereotypes entrenched on both sides, in getting the two peoples to at least understand what the other is thinking and feeling?*

They make a huge difference and I say this as someone who is involved in these efforts. Mental borders are opening, even if the physical ones remain closed. And the one who really paved the way was Hrant Dink, who did more in his death than he could have in life. In fact, many Turkish elite in Istanbul were the first to commemorate his death and were among the hundreds of thousands of Turks who marched in his funeral procession. He was one of their own.

I see concrete manifestations of how Hrant Dink's murder has changes Turkey. I write a column for Turkish Newsweek and give Turkish media inter-

## Conference on the Treatment of the Armenian Genocide in National and International Law

MINNEAPOLIS -- The Journal of Law and Public Policy at the University of St. Thomas and the International Institute for Genocide and Human Rights Studies (A Division of the Zoryan Institute) are jointly organizing and sponsoring a conference on the "Treatment of the Armenian Genocide in National & International Law." The conference will bring together legal specialists with a variety of expertise in national (Turkey, US, Britain) and international law and genocide. The event will take place on February 5<sup>th</sup>, 2010 at the University of St. Thomas in Minneapolis with the participation of the Cafesjian Family Foundation and the Minneapolis Foundation.

Despite various tribunals to prosecute war crimes and crimes against humanity since (WWII, Nuremberg, Rwanda, Yugoslavia, Cambodia, and the establishment of the International Criminal Court in 2002, little progress has been made on the punishment and prevention of the crime of genocide. It has been argued that this relative ineffectiveness has contributed over the years to the emboldening of those who would consider perpetrating genocide. Darfur is one example that is still ongoing and there are no guarantees that others will not follow.

This situation will only worsen with the tripling of the world's population since WWII. The shrinking of the resources to sustain life, and the chasm between the few that have and the many that have not, will increase the risk of intra-national and international conflict, including genocide.



This conference will draw attention to how one case of genocide, the Armenian case, has been treated in national and international law, and how its manipulation strengthens the hands of deniers and undermines the international legal regime intended to prevent genocide.

The conference hopes to raise awareness among policy makers to strengthen the legal framework so that all cases of genocide are treated with justice and that politics do not obstruct the application of the law nationally and internationally.

The conference will take place from 9 a.m. to 5:30 p.m. in the Schulze Grand Atrium at the School of Law at the University of St. Thomas.

The International Institute for Genocide and Human Rights Studies (A Division of the Zoryan Institute) is dedicated to the study and dissemination of knowledge regarding the phenomenon of genocide in all of its aspects to create an awareness of it as an ongoing scourge and promote the necessity of preventing it.

## Hrant Dink Day Commemorated in the UK

Continued from page 2

tion) detailed the extensive manner in which ongoing Turkish state terror and criminalisation of writers, journalists and publishers is evident. He also explained the relevance of holding the International Committee Against Disappearances' international conference in London in May this year.

Professor Khatchatur I. Pilikian's moving presentation ("Problems with the terms from Holocaust to Genocide") and conclusion provided much food for thought:

Poor old Raphael Lemkin! Latter-day sophists are trying to 'bypass' him, particularly now that concepts such as Democracy, Socialism, Freedom, Human Rights, and what not, are made to lose their essential meanings, nay even are made to 'act' as their antinomies in real life through their post-modernist, neocon and neo-liberal abuse. Yes, even language is experiencing a collateral damage indeed. To top it all, the recent and most popular President of the USA since J.F. Kennedy, Barak Obama, chose to use the Armenian term Medz Yeghern=Big Crime in his April 24, 2009 commemorative speech in remembrance of the Genocide of the Armenians, without ever mentioning the word Genocide, let

alone its modern and precise Armenian equivalence: Tseghsbanoutyoun.

When addressing the American Armenian voters during his presidential campaigns, the word the distinguished Senator Barak Obama always used, was Genocide. Naturally, he got most of the American Armenian votes. [But] as President of USA, Barak Obama chose to 'balkanise' Lemkin's coinage of the word, singling out one of its national culture dictated pre-Lemkinian usage, as if unwittingly emulating Prof Haim Bresheeth's advice, ... thus avoiding the word Genocide. The question remains: Why President Obama's archaic choice?

Although the answer is not hard to decipher from the history of the last century, our turbulent times too will soon teach us new lessons, granted we are willing to learn and act upon it. As the Preamble of the Verdict of the prestigious Permanent Peoples' Tribunal of April 16th 1984 concludes: "Indeed, acknowledging genocide itself is a fundamental means of struggling against genocide. The acknowledgement is itself an affirmation of the right of a people under international law to a safeguarded existence". Let's pray to God to let this grace of acknowledgement befall our brethren and sisters of denial, including those among our own UK Parliamentarians.

## Children's Magazine in Armenian to be Launched Colorful Monthly Intended for 3 to 7 Year Olds

GLENDALE -- Gakavig, a colorful new monthly magazine for children, is being launched in Southern California in the first week of February.


Parents of young children in the Armenian-American community have long complained of a shortage of child-friendly books and magazines in the Armenian language. For children 7 and under, parents can find hundreds of books with simple stories, basic vocabulary, and powerful images — in English. Not so in Armenian.

Juliette Davtian has launched the magazine to give Armenian children a colorful and fun way to see and hear stories in Armenian, to learn reading and counting in Armenian, and to relate to the world around them in the Armenian language.

"Children learn best through colorful images," Davtian said. "They have different talents. As adults, we should recognize children's different styles of learning and interacting, and promote the best possible development of their natural strengths and weaknesses."

The magazine has colorful artwork and will feature stories, poems, riddles, songs, cut-and-paste projects, children's cooking projects, a bit of science, and more. Using classical Armenian spelling, the magazine is in both Eastern and Western Armenian.

Ms. Davtian has an MBA and marketing experience as well as years of experience as a preschool teacher, Armenian Saturday school teacher, and resident counselor for children and teenage girls, and a degree in psychol-



ogy and child development, she also has some experience in publishing.

"Starting a print publication in the Armenian-American community, especially in a time of economic uncertainty, is not a safe path to take, and several people have kindly reminded me of this fact," Davtian said.

"At the same time, I have been touched by the generous support of several distinguished members of our community. They understand that our community needs an excellent children's magazine, and share my confidence that parents and children will be excited to have Gakavig in their homes every month."

Gakavig will be available through several Armenian schools and in Southern California grocery stores. Subscriptions are available by calling 818.548.2438 or writing [gakavig@gmail.com](mailto:gakavig@gmail.com)

## Analyst Richard Giragosian

Continued from page 3

views on a regular basis. They no longer have a problem publishing the Genocide reference, it's no longer "alleged" or in quotes. In fact, the Armenian issue is no longer the taboo it used to be.

The interesting thing is that it isn't Armenian lobbyists, the ARF or the Armenian government that's pushing this; it's a powerful Turkish elite, an intellectual class. They are the ones who are helping Turkey move towards Genocide recognition. It's interesting that it's only in the past couple of years that we have prominent Turkish intellectuals now on the record recognizing the Genocide. And many have also discovered their Armenian "roots" and Armenian legacy.

We have started to know each other once again. Many in the diaspora grew up the way I did, thinking every Turk was a Talaat Pasha; every Turk was an enemy to be hated. That was dominant strain in the Armenian Youth Federation milieu that I grew up in. That's negative for us and it's also an unfair stereotype for them. Even the Turkish government is looking to create a new, positive stereotype for itself.

Now the key argument critiquing the actions of these Turkish intellectuals is that the Istanbul elite does not reflect the people now living in Anatolia. This is true. The elite doesn't reflect the way the common Turkish peasant thinks, This is why one area that will determine whether even the Protocols can last is changing the Turkish education system. The new

generation in Turkey needs to be taught the real history, addressing every aspect of the Genocide. I mean, even if the Turkish state recognizes the Genocide; it's not enough.

*What can you tell our readers, if anything, as to what transpired behind the scenes of negotiations in Switzerland? Was there anything related to the process of drafting the Protocols that our readers should be aware of?*

Oh yes. There were several interesting things on the table in Switzerland including Turkish proposals to the Armenian side to give diaspora Armenians the right to acquire Turkish citizenship, to invest in Western Armenia, without restriction, and to own property on those lands. These are concrete proposals that aren't reflected in the Protocols, meaning I'm not sure if the Armenian side rejected or didn't respond to them. I can't say.

One idea floated by the Turkish side, while less realistic but interesting, was their explanation that Mt. Ararat, being so close to Armenia, Armenians being able to see it on a daily basis, is something bad for us, a thorn in our side. It's something that worries us for the future. The Turks stated that from their point of view Ararat is nothing more significant than any other mountain in Turkey. And they were thinking of some kind of condominium approach to joint archaeological expeditions, joint development, visa-free travel to that area for Armenians to sightsee, etc.

(To be continued)

# ՍՏԵՓԱՆ ՍԱՊԱՅ - ԳԻԻԼԵԱՆ 1861-1928

Պատկառանք պարտադրող հանրածանօթ գրող, հասարակական գործիչ եւ մարմնացումը անխարդախ հայրենասիրութեան, այսպիսին էր Ստեփան Սապահ-Գիլլեան: Անհատ մը՝ որ գիտցաւ արհամարհել թէ երջանկութիւն ե՛ւ թէ հանգիստ ու կամովին նետուեցաւ իրաւագրութեան մարդուն հետ ապրելու, անոր վիշտերն ու տառապանքները բաժնելու եւ տարիներ շարունակ նոյն մարդուն համար պայքարելու՝ դադարաւորական ասպարէզին մէջ:



Իր կենդանութեան օրերուն ան բարեբախտութիւնը ունեցաւ ողջունելու մեր նորաստեղծ Հայրենիքը եւ ուժեղ խմբագրականներով ջատագովեց նոյն հայրենիքին թեւ ու թիկունք կենալու անհրաժեշտութիւնը, այն բացարձակ վստահութեամբ որ պիտի ապրէր, դառնալու համար հայ ժողովուրդի ամբողջական երազներն ու յոյսերը պսակաւորող ամրակուռ եւ կենդանի խաւրիսը:

Որպէս հիմնադիր-խմբագիր «Երիտասարդ Հայաստան»ի, երկար տարիներ առաջ բոցաշունչ եւ զարմանալի հեռատեսութեամբ իր գրած բոլոր խմբագրականներն ու ազգային-քաղաքական հարցեր շօշափող տեսութիւնները դեռ եւս կը պահեն իրենց թարմութիւնն ու այժմէականութիւնը:

Երբ կոտորուած եւ հալածական հայ ժողովուրդի մնացորդացը կ'ապրէր մռայլ ու յուսահատ օրեր եւ երբ ծայր կու տար յոռետութիւնը, Ս. Սապահ-Գիլլեան, իրեն յատուկ հեռատես քաղաքագէտի ակնոցով, կը մտրակէր նոյն օրերու յոռետեսները եւ կը նախատեսէր հայ ժողովուրդի փայլուն ապագան՝ ըսելով.

«Գալիս է ինքնավար Հայաստանը»:

Անգուզական տեսաբան էր Ս. Սապահ-Գիլլեան եւ տաղանդաւոր հրապարակագիր: Հայրենիքի ազատագրութեան գաղափարին եւ անոր համար աշխատելու եւ գոհաբերուելու ստիպողականութիւնը՝ ազգային եւ քաղաքական ալեկոծ եւ փոթորկոտ վերիվայրումներու ամենէն դժբախտ եւ ճակատագրական օրերուն իսկ չընկրկեցին զինք երբէք: Ընդհակառակը, ան պահեց անշիջելի հաւատք, հանդէպ հայկական դատի վերագարթնումին եւ անքակտելի վատահոլութեամբ կառչեցաւ զայն միշտ հետապնդելու գաղափարին:

Ս. Սապահ-Գիլլեան հայ ժողովուրդի, մանաւանդ քաղաքականապէս յուսահատած ոլորտներու մէջ սերմանեց յոյսը ապագայ յալթանակներու յաճախ կրկնելով իր մարգարէաշունչ եւ հայրենասիրական խօսքը. «Գալիս է ինքնավար Հայաստանը»:

Ան սրալած չէր: Եկաւ ինքնավար Հայաստանը՝ Սոցիալիստական իրաւակարգով, գոյառութեամբ խորհրդային Հայաստանի եւ սակայն մեր ազգային ձգտումներու մէկ մասը միայն իրականացնելով:

Սապահ-Գիլլեանի տապանաքարը Եւրոպայի Միքթի գերեզմանատան մէջ



# ՍԵՐՈՔ ԳԱԼԹԱՔՃԵԱՆԻ ՍԱՐՈՒԱՆ ՅԻՇԱՏԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

Շուրջ քառասուն օրեր առաջ Պաթոն Ռուժի օտար հողին յանձնուեցաւ անհաշարինդիր նուիրումի, ծառայութեան, գոհաբերութեան եւ ազգային բեղուն գործունէութեամբ առաքինի ընկեր Սերոք Գալթաքճեանը:



Ողբացեալ Սերոք Գալթաքճեանի անունը կը նոյնանայ դամապահայ գաղութի կազմաւորման Հ.Մ.Մ.-եան ընտանիքի եւ յատկապէս Ս. Սարգիս եկեղեցւոյ, ազգային կեանքի բարգաւաճման հետ: Փոքր տարիքէն եղած է Հ.Մ.Մ.-ի նուիրեալ մը, որուն սաղմին մէջ ստանձնած է գանազան պարտականութիւններ՝ միշտ բարձր պահելով միութեան վարկն ու հեղինակութիւնը: Ողբացեալը իր գաղափարական ընկերներուն կողքին միաժամանակ իր ուսերուն վրայ վերցուցած է Դամասկոսի Ս. Սարգիս եկեղեցւոյ ծառայութեան մէջ տարբեր պարտականութիւններ: Ս. Սարգիս եկեղեցւոյ մատուցած ծառայութեամբ եւ անոր հանդէպ իր սածած հաւատարմութեամբ Սերոք Գալթաքճեան դրսեւորեց մարդկային ու հոգեւոր արժէքներու հանդէպ իր խոր հաւատքը: Եկեղեցիին եւ Հ.Մ.Մ.-եան հայրենասիրական շունչով դաստիարակեց իր զաւակները: Իրեն համար ծառայութիւնն ու նուիրումը մարդկային ու բարոյական ամենասուրբ սկզբունքներն էին: Կեանքի պայմանները ստիպեցին, որ Սերոք Գալթաքճեան ընտանեօք գաղթէ Միացեալ Նահանգներ՝ Պաթոն Ռուժ:

Համեմատաբար անծանօթ այս շրջանին մէջ ան փոքրիկ Հայաստանի մը բոյնը դրաւ, երբ հիմնեց

Հանուց հայրենակցական միութիւնը եւ աւելի ուշ՝ ընտանեկան եւ անձնական միջոցներով Պաթոն Ռուժի մէջ կառուցեց հաւատքի օրրան Ս. Կարապետ եկեղեցին:

Հարագատի մը կորուստը անդարմանելի եւ խոր հետքեր կը ձգէ մարդու մը մտքին եւ հոգիին մէջ: Անոր մահուան գոյժը ծանր հարուած մըն էր իր ընտանեկան պարագաներուն եւ հարագատներուն: Սերոք Գալթաքճեան պաշտօնամուտ անձ մը չէր: Պաշտօնով սովորական անձ մըն էր, իսկ գործով՝ կարիքաւորին ծառան: Այս վկայութիւնները ուրիշներն են, որ կը կատարեն: Եկեղեցի ունենալու տեսիլքը զինք մղած էր Պաթոն Ռուժի մէջ հիմնելու Ս. Կարապետ եկեղեցին, որովհետեւ կը հաւատար, թէ եկեղեցիի միջոցաւ պիտի ծառայէ հայրենիքի եւ հայութեան:

Սերոք Գալթաքճեանի լիշատակը անթառամ պիտի մնայ իր բոլոր հարագատներուն սիրտերուն մէջ: ՍԳԱԿԻՐ

## ԻՐԱՆԱՅԱՅ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ ԴՈԿՏ. ԱՐՄԵՆ ՅԱՆՆԱԶԱՐԵԱՆԻ ՍԱՐԸ

Երկարատեւ ու ծանր հիւանդութիւնից յետոյ կեանքից հեռացաւ գիտակցական կեանքում հայ մշակոյթին ողջ էութեամբ գինուորագրուած, եզակի նուիրեալ, Հայկական ճարտարապետութիւնն ուսումնասիրող հասարակական կազմակերպութեան հիմնադիր-նախագահ, ճարտարապետութեան դոկտոր Արմէն Յովհաննէսի Հախնազարեանը:

Ծնուել է 1941 թ. Մայիսի 5ին Թեհրանում, 1918 թ. նախիջեւանահայութեան Չարդերից հրաշքով փրկուած ազուլիսցի, լեզուաբանութեան դոկտոր, Թեհրանի պետական համալսարանի գրական ֆակուլտետի դասախօս, պետական կրթական յնաձնաժողովի անդամ, հայկական դպրոցների վերատեսուէ Յովհաննէս եւ Թեհրանի պետական երաժշտական համալսարանի դաշնամուրի ուսուցչուհի Արուսեակ Հախնազարեանների ընտանիքում:

Տարրական եւ միջնակարգ կրթութիւնը ստացել է Բուշեշ Դաւթեանի անուան դպրոցում եւ այն աւարտել 1959 թ.:

1961 թուականից Գերմանիայի Աախեն քաղաքի համալսարանում (T. H. Aachen) ուսանել է ճարտարապետութեան ֆակուլտետում, որն էլ աւարտել է 1968 թ.:

1968 թուականից նոյն համալսարանում ուսանել է նաեւ քաղաքաշինութիւն (Urbanism)՝ աւարտելով 1973 թ.:

1968 թ. շուրջ 6 ամիս զբաղուել է Պարսկաստանի Ատրպատական նահանգում (պատմական Ար-

տազ գաւառ) գտնուող հայկական վանքերի ու եկեղեցիների, մասնաւորապէս Սուրբ Թադէոս առաքեալի, Ծործորի Սբ. Աստուածածին Դարաշամբի Սբ. Ստեփանոս նախավկայ վանքերի ուսումնասիրութեամբ եւ հափազրութեամբ, ընդ որում, Սբ. Թադէոս առաքեալի վանքի ուսումնասիրութիւնը հիմք է ծառայել ճարտարապետութեան դոկտորական թէզի համար: 1973 թուին աւարտել է ուսումը՝ ստանալով Dr. Ing. Architek Planer-ի կոչումը:

1972-1978 թուականների ընթացքում Գերմանիայից կազմակերպել եւ մասնակցել է Արեւմտեան Հայաստան եւ Կիլիկիա իրականացուած գիտարշաւներին, որոնց արդիւնքը հիմք է ծառայել «Հայկական ճարտարապետութեան» 7 հատորանոց միկրոֆիլմերի հրատարակութեանը պրֆ. Վազգէն Բարսեղեանի (ԱՄՆ) մեկնաբանութեամբ:

Շարունակական աշխատանքը, որի նպատակն էր գիտարշաւների միջոցով Պատմական Հայաստանի տարածքում (ներառեալ Փոքր Հայքն ու Կիլիկիան, նաեւ Սփիւռքը) գտնել, ուսումնասիրել եւ հանրութեանը ներկայացնել հայկական պատմաշակութային արժէքները, հիմնաքարն է դարձել «Հայկական ճարտարապետութիւնն ուսումնասիրող» (Research on Armenian Architecture RAA) հասարակական կազմակերպութեան ստեղծման համար (1978 թ.), որն էլ պաշտօնական գրան-

# ԳՐԱԿԱՆ

## ԵՐՈՒԽԱՆ (ԵՐՈՒՎԱՆԴ ՍՐՄԱՔԷՇԽԱՆԼԵԱՆ) ՆՈՎԵԼՆԵՐ

Ս. Վ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Անոնք միայն, որ տաղանդի, ճարտարութեան եւ դրամի շնորհիւ դուրս կը ցայտեն ամբոխի, վժիժացող եւացումէն՝ ինչպէս ժայռի կարկանդակներ դաշտի հարթ հաւասարութեան վրայ, անոնք միայն, որ ճակատագրի քմածին բերումով, ամբոխի գոհակութենէն անջատուելով բացառիկ դիրքերու տիրացած են, կարծես անոնք միայն ունին բոլոր ձիրքերը, բոլոր առաքինութիւնները, բոլոր այն մեծութիւնները, որք զարմանքի, հիացման, փառաբանութեան ու խունկի իրաւունքը կ'ունենան միայն:



Ես այսպէս չեմ դաւանիր սակայն:

... Անսահման, անպարզագրելի պետականութեամբ դրասանդուած ամբոխը իմ գմայլման առարկան է միշտ, ան ինձի համար կենդանի, հեւացող գիրք մ'է, որուն էջերը անճառ յափշտակութեամբ կը կարդամ՝ անոր մէջ միայն գտնելով անկեղծ, անշարժ առաքինութիւնը, անպատրուակ անձնութիւնը եւ չյանձնարարուած, ինքնաբեր դիւցազնութիւնները, որոնց քով գաճաճ համեմատութիւններ կ'առնեն շատ մը ծախու առնուած համբաւներ, սնգուրուած մեծագործութիւններ եւ շունդալից, աղաղակուած անձնագոհութիւններ:

Եւ տիպարներու ինչ հոգեգուարձ այլազանութիւն մը հոն՝ ամբոխին ծոցին մէջ: Եւ որքան տիպար, այնքան պատմութիւն, այնքան գոյն այդ ճոխ երանգապնակին վրայ:

**ԵՐՈՒԽԱՆ**  
Արեւմտահայ դեմոկրատ գրող Երուխանը հայկական նովելի տաղանդաւոր դէմքերից է:

Նա միեւնոյն ժամանակ նշանաւոր վիպասան է, հրապարակախօս, «կորովի եւ ժողովրդական խմբագրապետ» (Տիգրան Արփիարեան), թարգմանիչ եւ մանկավարժ: Գրական ասպարէզ իջնելով անցեալ դարի վերջին տասնամեակում, Երուխանը իր երկու ու կէս տասնամեակ ստեղծագործական կեանքի ընթացքում զանազան օրաթերթերում եւ հանդէսներում հրատարակել է շուրջ վաթսուներեք «Հարազատ Որդի» վիպակը, «Գաղթականները» անավարտ վէպը եւ արեւմտահայ ռախտակական գրականութեան շողշողուն մարգարիտներից մէկը՝ «Ամիրային Աղջիկը» վէպը:

Երուխան իր գրական երկերում զարգացնում է 80-ական թուականների արեւմտահայ ռեալիստական գրականութեան լաւագոյն տրագիցիաները: Նրա ստեղծագործական մեթոտը քննադատական ռիալիզմն է: Վարպետօրէն թափանցելով իր նկարագրած հերոսների կեանքի մէջ, Երուխանը որոնում, պրպտում, դիտում եւ առանձնացնում է ժամանակաշրջանի համար բնորոշ ու տիպականը, կատարում գեղարուեստական խորիմաստ ընդհանրացումներ:

Ժողովրդական բարքերը պատկերող նրա նովելները, իրենց խոր ճշմարտացիութեամբ, ուղղակի ցնցող են:

Երուխանն ունի սոցիալական որոշակի ըմբռնումներ ու համոզմունք: Դասակարգային հասարակութեան մէջ նա պարզ տեսնում է հասարակ մարդկանց անլուր շահագործումը, սակայն քննադատա-

կան ռեալիզմի նոյնիսկ դեմոկրատներկայացուցիչներին յատուկ աշխարհայեացքային սահմանափակութեան պատճառով, չի գիտակցում շահագործումից ազատագրուելու ռեալ ուղիները:

\*\*\*

Երուխանը (Երուանդ Սրմաքէշխանլեան) ծնուել է Կ. Պոլսի խասգիւղ արուարձանում, 1870 թուականի Յուլիսին, արհեստաւորի ընտանիքում:

Վոսպորի բնութիւնն իր բազմերանգ գեղեցկութիւններով, ալեկոծ ծովը իր մոլեգին ալիքների մեծածխոք փշրումներով, ձկնորսները, նաւավարներն ու նրնց տառապանքներով լի կեանքը օրօրում են Երուանդի անժպիտ մանկութիւնն ու պատանեկութիւնը:

Երուանդն իր սկզբնական կրթութիւնն ստացել է խասգիւղի Ներսիսեան վարժարանում: 1886 թուականին աւարտելով վարժարանը, նա ընդունում է բժշկական ուսումնարան, սակայն հայրը՝ Պօպոսը, որդուն հանում է բժշկական ուսումնարանից եւ ուղարկում Կ. Պոլիս Կենտրոնական վարժարանը, որի բացումը կատարում էր այդ օրերին:

Երկրորդ ուսումնական տարուայ վերջին, ծանր հիւանդութեան պատճառով, Երուխանը հարաւորութիւնն չի ունենում մասնակցելու փոխադրական քննութիւններին եւ դուրս է մնում վարժարանից: Նրա լաւահառաջ թախանձանքները՝ վերստին վարժարան ընդունելու իրեն՝ մնում են ասպարդիւն:

Սրմաքէշխանլեանը որոշում է լրջօրէն զբաղուել ինքնակրթութեամբ: Երկու եւ կէս տարի, ուժերի նորագոյն լարումով, կարծում յոյն ժամանակակից ռեալիստ գրողներից շատերին: Զբաղում է պատմութեամբ ու քաղաքատնտեսութեամբ: Յամաւօրէն սովորում է ֆրանսերէն լեզուն:

Նա պատրաստ էր շարունակելու ինքնակրթութիւնը, սակայն ընտանեկան անապահով վիճակից ստիպուած հայրը որդուն ասում է.

- Զաւակս, եթէ հաց չբերես, քեզի այլեւս հաց չկայ ուտելու:

Երուխանը ոտք է դնում գրական ասպարէզ: Իր գրական առաջին փորձերը նա կատարում է 19-20 տարեկան հասակում՝ հանդէս գալով «Ծաղիկ» հանդէսում եւ «Ճերիտէի շարգիէի» հայատառ թրքերէն թերթում: 1889 թ. Արամ Վրոյրը խասգիւղում բեմադրում է Գ. Սունդուկեանի «Պեպոն» եւ պոլսական բարքերը պատերոզ «Վարժապետ» դրաման: Սրմա-

քէշխանլեանի գրական առաջին թոթովանքները թատերական փոքրիկ յօդուածներ էին յիշեալ բեմադրութիւնների մասին:

1890 թ. վերջերին Սրմաքէշխանլեանը նշանակում է Կ. Պոլսի «Արեւելք» օրաթերթի խմբագրի տեղակալ՝ սուլթանական հետապնդումից խուսափելու նպատակով արտասահման փախած Լեւոն Բաշալեանի փոխարէն:

«Արեւելք» դառնում է գրական հասունացման արդիւնաւետ դպրոց սկսնակ գրողի համար: Օրաթերթի 1891 թ. Մայիսի 29-ի համարում տպագրուում է Սրմաքէշխանլեանի «Պապուկը» նովելը: Գրական այդ երախայրիքը անմիջապէս ճանաչում է բերում հեղինակին: «Բայց ատիկա պարզապէս սքանչելի էր... դուն գրող մը կ'ըլլաս» - հիացմունքով ասում է Արփիար Արփիարեանը՝ «Պապուկը» ընթերցելուց յետոյ: «Պապուկը» նովելի մասին բարձր կարծիք են յայտնում նաեւ Գր. Զոհրապը, Հրանտ Ասատուրը եւ Տիգրան Կամսարականը:

Եր. Սրմաքէշխանլեանն «Արեւելք»-ում աշխատելու առաջին տարիներին (1891-1896 թ.թ.) է գրել իր գողարիկ նովելների մեծ մասը («Մեզատճին», «Մարկոս աղբօր սէրը», «Պատիկ Սեփին պատմութիւնը», «Տապանագիրը», «Հիւծախտաւորը», «Կոզը», «Զուկին փոխարէն», «Լուսցարարուհին» եւ այլն):

Գրական ինքնուրոյն երկերի կողքին այս շրջանում հեղինակը ծաւալում է թարգմանչական լայն աշխատանք: Նա ֆրանսերէնից թարգմանում եւ «Արեւելք» օրաթերթում տպագրում է 13 անուն վէպ եւ վիպակ՝ շուրջ 1540 թերթոն ընդհանուր ծաւալով: Այդ թւում Ալֆոնս Դոդէի «Ջեկը», Հեկտոր Մալոյի «Ընտանքիով», Ժիւլ Լէնոնի «Եարիզի Գայլերը», Ժիւլ Մարիի «Դժգոյն աղջիկը» վէպերը:

1893 թ. Սրմաքէշխանլեանը աշխատակցում է նաեւ «Մասիս» հանդէսին, որի խմբագիրն էր Գր. Զոհրապը: Այստեղ տպագրուում են նրա «Քարիտեզին», «Գինովին Վարձը» եւ «Զուկին փոխարէն» նովելները:

1896 թ. Օգոստոսին, երբ Կ. Պոլսի սալարկները ողողում էին անմեղ հայերի արիւնով, Սրմաքէշխանլեանը նոյնպէս փախչում է ծննդավայրից եւ հազարաւոր հայերի հետ միասին ասպատան գտնում Պուլկարիայի Վառնա քաղաքում:

Տարագրութեան մէջ նա շարունակում է զբաղուել գրական, հրապարակախօսական եւ մանկավարժական աշխատանքով՝ միշտ մնալով իր բնակէր հայրենակիցների շարքերում: Այս շրջանի նրա գրական ստեղծագործութեան հիմնական թեման գերագնացապէս հայ գաղթականների կեանքի պատկերումն է, իսկ հրապարակախօսութեան սուր սլաքն ուղղուած է Սուլթան Համիտի ռեալիզմին կառավարութեան դէմ:

1897 թ. մինչեւ 1899 թ. կեսերը Սրմաքէշխանլեանը Վառնայից աշխատակցում է Կ. Պոլսի «Բիւզանդիոն» օրաթերթին՝ ըն-

թերցողներին ներկայացնելով հայ գաղթականների կեանքի ծանր դրուագները: Համիտեան լրտեսող գրաքննութիւնից խուսափելու համար, նրա նովելները, պատմուածքներն ու յօդուածները տպագրուում են «Ե. Գաղթական» եւ «Աշուղ» ծածկանուններով: «Բիւզանդիոն» օրաթերթի էջերում տպագրուած նրա լաւագոյն նովելներից են «Կը ժպտի», «Զանգակահարը», «Երեք ամսուայ սուգ» եւ այլն:

1898 թ. Մարտին Սրմաքէշխանլեանը Վառնայում հիմնում է «Շարժում» թերթը: Նա միեւնոյն ժամանակ աշխատակցում է Ա. Զօպանեանի «Անահիտ» հանդէսին, որտեղ տպագրուում են նրա «Համբարին վրէժը» եւ «Հուռութքը» պատմուածքները: Այդ ժամանակուանից էլ Սրմաքէշխանլեանը հանդէս է գալիս Երուխան գրական ծածկանունով:

1899 թ. Երուխանը ոտք է դնում մանկավարժական ասպարէզ: Վառնայում հիմնուած «Հայկական Կրթարան» վարժարանում մէկ եւ կէս տարի դասաւանդում է աշխարհաբար հայերէն:

1900 թ. Մարտի 15-ից Երուխանը հրատարակում է «Շաւիղ» կիսամսեայ հանդէսը: Այստեղ տպագրուում են նրա «Կառնդէքը», «Սայլորդը», «Արեան ուժը», «Օղորմութիւն մը...» նովելներն ու պատմուածքները եւ «Գաղթականները» անաւարտ վէպը:

Խնամքով եւ կանոնաւոր լոյս ընծայող հանդէսը, սակայն, 1901 թ. յունուարեան համարից յետոյ դադարում է:

1902 թ. որոշ ժամանակ Երուխանը վարում է Ասպրիզի ազգային վարժարանի տնօրէնութիւնը, իսկ 1902 թ. մինչեւ 1904 թ. սկիզբը պաշտօնավարում է Վառնայի ազգային վարժարանում:

1904 թ. Երուխանն աշխատակցում է տպարանատէր Օննիկ Բարսեղնաի հրատարակած «Վիպաթերթ» հանդէսին: «Վիպաթերթ»-ում մաս-մաս տպագրուում է նրա «Մերժուած սէրը» արժէքաւոր վէպը:

1904 թ. Երուխանն Պուլկարիայից տեղափոխուում է Եգիպտոս: 1904-1908 թ.թ. նա դարձեալ զբաղւում է մանկավարժական աշխատանքով: Երեք տարի Ալեքսանդրիայի Պոզոսեան ազգային երկսեռ եւ մէկ տարի Գահիրէի ազգային վարժարանների բարձր դասարաններում դասաւանդում է աշխարհաբար հայերէն, ֆրանսերէն, պատմութիւն եւ աշխարհագրութիւն: Զուգահեռաբար Երուխանն զբաղւում է նաեւ խմբագրական աշխատանքով: 1905 թ. Ալեքսանդրիայում նա Սմբատ Բիւրատի հետ միասին հրատարակում է «Սիւուան» հանդէսը, որ ունենում է պարզապէս թիթեռի կեանք (հրատարակում է միայն երկու համար): Սակայն ուշագրաւն այն է, որ այս հանդէսում Երուխանի թարգմանութեամբ տպագրուում է Մաքսիմ Գորկու «Բոլես» պատմուածքը: Պատմուածքի սկզբում տրուած հակիրճ անտոացիայում Երուխանը հիմնացումն քով է խօսում Լեւ

Շաք.ը էջ 18

**ՎՐԻՊԱԿ**  
«ՄԱՍԻՍ»-ի մեր նախորդ, Յունուար 23, 2010 թուակիր համարի մէջ լոյս ընծայած էինք յօդուած մը «Տիգրան Արքայի Մուտքը Անտիոք» վերնագրով, որուն հեղինակը, մեր բոլորին սիրելի աշխատակից՝ Պօղոս Լազիսեանն է, որուն անունը վրիպումով մը մոռցուած էր տպագրուելէ: Կ'ապաւինինք իր ներողամտութեան:

# ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔ

## «ԶԿԱՅ ԶԱՐԻՔ, ԱՌԱՆՑ ԲԱՐԻՔԻ»

(ԻՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ)

### ԱԻԵՏԻՍՆԱԶԱՐԵԱՆ

Ներքոյ իրական դէպքը որ այսօր պիտի ներկայացնաք սիրելի ընթերցողներին պատահել է 30-35 տարիներ առաջ:

Արտեմը եւ Լուսինէն մեր գաւառից էին, որոնք բնակութիւն էին հաստատել Թեհրանում եւ ունէին 3 գաւակներ: Արտեմը հասարակ բանուոր էր, աշխատում էր կոշիկի գործարանում: Նա ստացած ուժերով հազիւ էր կարողանում իր ընտանիքի ծախսերը հոգալ եւ կերակրել անչափահաս գաւակներին: Մեքենայի արկածի հետեւանքով Արտեմի ձեռքը վնասուեց եւ գործարանի ղեկավարութիւնը գործից ազատեց նրան: Ծատ դռներ թակեց նա: Ծատ գործատէրերի դիմեց, բայց ոչ ոք չցանկացաւ Արտեմին գործ տալ, նկատի առնելով նրա ձեռքի վնասուածքը: Օրեր, ամիսներ խեղճ մարդը առաւօտից մինչեւ ուշ գիշեր դիմում էր այս ու այն կողմ, գործ գտնելու անսպառ յոյսով: Տնտեսական ծանր վիճակը խորը ազդեցութիւն ունեցաւ ամուսինների յարաբերութիւնների եւ ընտանեկան վիճակի վրայ: Կինը Լուսինէն յաճախ կշտամբում էր ամուսնուն եւ ամբողջ ժամանակ չի շնչում իր եւ գաւակների ողբալի դրութիւնը եւ կիսաքաղց պայմանները: Խեղճ Արտեմը խելակորոյս վիճակում չգիտէր ի՞նչ անէր, ո՞նց գործ գտնէր, ո՞նց կշտացնէր իր հարազատներին:

Մի երեկոյ սովորականի պէս Արտեմը տխուր ու անտրամադիր, յոգնած ու նուազած վերադարձաւ տուն: Հենց դրան շէմքին կինը սկսեց իր սովորական կշտամբանքները եւ մեղադրականները շարունակեց ամուսնու ճակատին: Արտեմը այլեւս չհամբերեց եւ դուռը ամուր գարկելով հեռացաւ տանից:

\*\*\*

Ուշ երեկոյեան Արտեմը քայլեց դէպի քաղաքի հիւսիսը եւ մտամոլոր գնում էր, չգիտէր ի՞նչ անէր, ո՞ւր գնար, որտե՞ղ պատուարուէր: Քաղաքի ժամացույցը քաղցրալուր գրնգոցով ազդարարեց գիշերուայ ժամը 12ը: Արտեմը շարունակում էր քայլել անսպասակ, մոռթ ու լուռ փողոցներով: Բարձրադաս շէնքերը մթնած էին ու թաղուած խորը լուռութեան մէջ: Հատ ու կենտ պատուհաններից աղօտ լոյս էր նկատուում: Այս երեւոյթը ուժ եւ յոյս էր ներշնչում Արտեմին: Դիմացի փակուղու մէջ գտնուող երկարկանի մի շէնք նրա ուշադրութիւնը գրաւեց: Փողոցի երկաթեայ մեծ դարպասը կիսաբաց էր, իսկ երկրորդ յարկի բոլոր պատուհաններից լոյսեր էին երեւում: - Թերեւս այստեղ հիւրասիրութիւն կայ - մտածեց Արտեմը: Մտենալով շէնքին զգաց որ լուռութիւն է տիրում այնտեղ: Մարդկային ոչ մի ստուեր չէր նկատուում լուսաւոր պատուհաններից: Հետաքրքրութիւնը ստիպեց նրան ներս մտնել կիսաբաց դարպասից ու դանդաղ քայլերով մտնել արդիական ոճով կառուցուած շէնքին: Մուտքի դուռը բաց էր: Արտեմը մի անախորժ հոտ զգաց, որ գալիս էր կիսաբաց եւ լուսաւոր սենեակներից: Արտեմը անմիջապէս անդրադարձաւ որ դա գազի հոտ է, որն գալիս է խոհանոցի մէջ տեղադրուած գազօձախից: Նա առանց ժամանակ

կորցնելու մտաւ խոհանոց, մօտեցաւ գազօձախին եւ փականքը պտտեցրեց: Անմիջապէս անցաւ առաջին յարկաբաժնի սենեակները, ման եկաւ: Այդ յարկում ոչ ոք չկար: Իսկոյն բարձրացաւ երկրորդ յարկը եւ առաջին սենեակում հանդիպեց տարեց ամուսիններին, որոնք ուշաթափ եւ կիսամեռ փռուած էին սենեակի մէջ: Առանց ժամանակ կորցնելու բաց արաւ բոլոր պատուհանները, դռները եւ միացրեց ելքաբերական քամհարները ու վազեց փողոց: Այդ պահին պահակ-նստիկանը մօտեցաւ Արտեմին եւ զարմանքով հարցրեց, թէ կէս գիշերին ինչո՞ւ է կանգնել դրան մօտ: Արտեմը պատմեց եղելութիւնը: Ոստիկանը սուտը լուրջ կանչեց իր գործակից ոստիկանին եւ շտապով 5-6 գիշերապահ ոստիկաններ հաւաքուեցին դրան մօտ եւ Արտեմի առաջնորդութեամբ անցան շէնքից ներս: Արտեմը մի ոստիկանի օգնութեամբ կարողացաւ ուշքի բերել ուշաթափ տարեց ամուսիններին:

\*\*\*

Առաւօտեան ժամը 11-ն էր: Արտեմը ոստիկանատանը կանգնած էր հերթապահ սպայի սեղանի առաջ եւ պատասխանում էր նրա հարցերին: Սպան սպանական ոճով ասաց - դու ամբաստանուած ես անօրինական կերպով, կէս գիշեր անց մուտք գործել Խորհրդարանի պատգամաւոր Ա.ի բնակարանը, գողութեան նպատակով: Մեր գիշերապահ ոստիկանը այդպէս է գեկուցել մեզ: Արտեմը փորձեց արդարանալ եւ պաշտպանել իրեն, բայց սպան կրկնեց իր ամբաստանութիւնները: Յանկարծ դուռը բացուեց եւ ներս մտաւ Խորհրդարանի անդամ Ա.ն: Սպան ոտքի կանգնեց ու յարգալից բարեկեց նրան, աւելացնելով որ երէկ գիշերուայ գողը բռնուած է եւ այսօր կ'ուղարկուի դատարան: Մեծահարուստ Ա.ն դառնալով դէպի սպան ասաց. - Այս մարդը գող չէ: Նա պատահամբ մտել է մեր տուն եւ փրկել իմ եւ կնոջս կեանքը: Եթէ սա չլինէր խոհանոցի աւերուած գազօձախից հոտը գազը մեզ պիտի խեղդէր: Եթէ 10 որպէս եւս այդ վիճակում մնայինք մեր մահը անխուսափելի էր:

Ապա դառնալով Արտեմին մեծահարուստ Ա.ն ասաց. - Պարոն, ես չգիտեմ ո՞վ է դուք, ի՞նչ ազգի էք պատկանում: Բայց ես եւ կինս մեր կեանքը քեզ ենք պարտական: Ասա ի՞նչ կ'ուզես, ինչո՞վ եւ ինչպէ՞ս կարող եմ վարձահատուց լինել քեզ: Արտեմը պատասխանեց - ես ոչինչ եմ ուզում, ուրախ եմ միայն որ պատահամբ եւ բարի մի դիպուածով կարողացայ փրկել երկու մարդկային կեանք: Ես ձեռքիս վնասուածքի պատճառով անգործ եմ, եթէ հնարաւոր է ինձ համար մի գործ հայթայթէք: Ա.ն աւելացրեց - Դու վաղուանից նշանակուած ես քաղաքի հարաւում գտնուող իմ կաթնեղէն արտադրող գործարանի պահեստապետ: Այստե՛ս քո եւ քո ընտանիքի կեանքը իմ կողմից ապահովուած է: Ապա մեծահարուստ Ա.ն համբուրեց Արտեմին եւ երկուսով ուրախուրախ դուրս եկան ոստիկանատանից: Արտեմը ուրախ ու գոհ քայլերն ուղղեց դէպի տուն, ուր դրան շէմքին կանգնած մտահոգ Լուսինէն սպասում էր անցնող գիշերուանից:

## ՀԱՅԵԼԻՆ ԸՆԴՄԵՁԵՆ

### ԿԵԱՆՔԸ ՊՏՈՅՏ ՄԸՆ Է.....

### ԿԱՍԻԱ ԹՈՓՈՒՇԵԱՆ

Մեր կեանքի պտոյտը միանման չէ. մէկուէն կրնայ ըլլալ արկածախնդրական, իսկ ուրիշինը՝ սովորական ու խաղաղ: Երբեմն այս պտոյտին ընթացքին կրնանք կորսնցել մեր ճամբան կամ նոյնիսկ տարուիլ ու խաբուիլ՝ համոզուելով ուրիշ պտոյտով մը: Հազուադէպ է, որ շատեր վերադառնան իրենց ձգած կէս ճամբան եւ շարունակեն հոնկէ, ուրկէ շեղած էին:

Բոլորս ապրած ենք մոլորուածութեան եւ շուարուածի զգացումները, Վոլորս զգացած ենք կորուստի համբու եւ անցեալի երանին, բոլորս ալ թանկարժէք իրերու նման կը պահենք այդ անցեալի յիշատակները, որոնք միակ հարազատ պատկանելիութիւնն է մարդ արարածին:

Այս պտոյտին ընթացքին կը հանդիպինք ու կը ծանօթանանք բարեկամներու եւ կամ տարբեր տեսակի մարդոց, որոնք կրնան հովի նման անցնիլ առանց որեւէ հետքի կամ ալ կրնան իրենց ազդեցութիւնը ձգել մեր սիրտերուն եւ միտքերուն մէջ:

Այս տարուան ընթացքին մենք, այսինքն՝ դուք եւ ես, ամէն Շաբաթ միասնաբար պիտի ունենանք մեր իւրաքանչեւ պտոյտը եւ իրարու պիտի չի շնչենք մեր առօրեային քաղուած ամէնէն պարզ, սակայն լուրջ ու մտահոգ պատահարները:

Մեր հիմնական նիւթը պիտի ըլլայ «իմ» եւ «ձեր», այսինքն՝ մեր պատկերը, մեր իրավիճակը՝ հայելիին ընդմէջէն դիտուած:

Ընդհանրապէս երբ հայելիին կը նայինք, կը տեսնենք մեր անձին արտացոլացումը, ականատես կ'ըլլանք մեր արտաքին տեսքին, կը տեսնենք մեր աչքերը, քիթը, բերանը, հասակը, մազը... Բայց հազուադէպ է, որ նայինք մեր արտաքինին ներս գոյուցութիւն ունեցող անձին: Ընդհանրապէս դժուարութիւն կ'ունենանք մենք մեզ տեսնելու հայելիին ընդմէջէն: Ծատ քիչեր են, որոնք կը տեսնեն եւ կը ճանչնան իրենք զիրենք:

Փորձեցէ՛ք եւ տեսէ՛ք՝ արդեօք ձեր արտաքինը եւ ներքինը կը համապատասխանեն իրարու. դուք ձեզի հարց տուէ՛ք՝ արդեօք ձեր «դուրսի» անձը «ներսի» անձին նմա՞ն է կամ թէ դիւրութեամբ տեսնուող անձը կը ճանչնա՞յ դժուարութեամբ տեսնուող անձերը: Նայեցէ՛ք դուք ձեզի հայելիին մէջ եւ տեսէ՛ք՝ արդեօք կը ճանչնա՞ք զիրար:

Այս մէկը կը նմանի մեր մտքի ու սրտի ձայներուն, որոնք ընդհանրապէս տարբեր բաներ կը փսփսան մեզի:

Ինքնաճանաչումը կարեւոր եւ անհրաժեշտ պայման մըն է մեր

կեանքի պտոյտին մէջ: Սովորատ ըսաւ՝ «ճանչցի՛ր անձդ», որովհետեւ երբ անձդ ճանչնաս, ինքնաբերաբար կը ճանչնաս շուրջ ինչնե՞րդ եւ շրջապատդ:

Զիրար եւ մենք մեզ ճանչնալով կրնանք վերադառնալ կամ գտնել մեր կորսնցուցած կեանքի ճանապարհը եւ շարունակել մեր կեանքի պտոյտը, որովհետեւ իւրաքանչիւրս ունի իր իւրաքանչիւր պտոյտը:

Հայելիին ընդմէջէն փորձենք տեսնել մեր աչքերուն ետին թաքնուած իսկական «ես»-ը, որպէսզի հեռանանք այն կեղծ եւ շինծու «ես»-էն, գոր մեր շրջապատը անուղղակի պարտադրած է մեզի, որովհետեւ մենք յատուկ արարածներ ենք, իւրաքանչիւրս իր մէջ ունի արուեստագէտ մը, որ կրնայ ստեղծագործել արուեստի հիանալի գործեր... իսկ ինչ արժէք ունի արուեստագէտը առանց իր ստեղծագործութիւններուն:

Չմանինք իրարու, գտնենք մեր անձին յատկութիւնները եւ աշխատինք ատոր հիման վրայ:

Վերցնենք մեր դիմակները մեր դէմքերուն վրայէն եւ ցոյց տանք մեր իսկական դէմքն ու երեսը: Մէկ կողմ դնենք մեր՝ տարիներով գործածած այդ կեղծ դիմակը, որուն ետին կորսնցուցած ենք մեր իսկական անձը, գոր այլեւս չենք ճանչնար: Զպահարտինք գեղեցիկ ու նոր կամ նոյնիսկ հին դիմակներու ետին՝ ձգելով մեր իսկական անձը անճանաչուած ու անտեսուած:

Հայելիին ընդմէջէն փորձենք մենք մեզ տեսնել ու ճանչնալ, տեսնենք մեր հոգին ու հաղորդակցինք իրեն հետ, որպէսզի փորձենք գոհացնել մենք մեզ եւ դարձեալ գտնենք այն, ինչ որ վաղուց կորսնցուցած էինք:

Ճիշդ է, որ երբեմն մեր տեսածը կամ գտածը կրնայ յուսախաբ ընել մեզ, բայց փորձենք համակերպիլ եւ ձգտիլ լաւագոյնին: Մեր իսկական անձերը գտնելով է, որ մենք կ'ըլլանք աւելի երջանիկ ու համերաշխ անձեր:

Ամանորի սեմին եւ տարուան մնացած օրերը փորձենք մենք մեզ դիտել ու տեսնել «Հայելիին ընդմէջէն»՝ հարց տալով՝ ո՞վ ենք մենք, եւ ի՞նչ է մեր կեանքի նպատակը:

Միքիլի՛ ընթերցող, որեւէ հարց որ կը մտահոգէ քեզ շրջապատէդ ներս, կրնաս կապուիլ այս ե-նամակի հասցէին՝ gassia.topoushian@gmail.com, որպէսզի միասնաբար գրուցենք եւ լուծենք այն, ինչ որ մտահոգիչ է շրջապատէն ներս:

Շնորհակալութիւն:

633 W. Glenside Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065



**Dr. Missak Ekmekdjian**  
Chiropractor



**Dr. Anahid Ekmekdjian**  
Chiropractor

Մեծտեսակներու եւ մանուկներու Բարբոփոքայի բուժում:  
Գլխացաւ, վզի, մէջքի, յոզային եւ մկանային ցաւեր:  
Ինքնաշարժի վթարի հետեւանքով պատճառած վնասուածքներու բուժում:

Ձեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է

**ՍՓԻՈՔ**

**ԻՐԱՆԱՐԱՅՈՒԹԵԱՆ ԿԱՌՈՅՑՆԵՐԸ  
ՆՈՐ ԶՈՒՂԱՅՈՒՄ**

**ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ԵՒ ԶՕՐԱՎԱՐ ԱԼԱՎԵՐԴԻ ԽԱՆԻ ՍԻՕՍԷՓՈՒՆԻ ԿԱՄԳՈՒՆ Է**

Նոր Զուղայ-Ըստ պատմական տուեալների Սիօսէ Փոլ-ի կամուրջը կառուցուել է շուրջ 400 տարիներ առաջ Իրանի ժամանակի թագաւոր Շահ Աբաս թագաւորի հայ գորավար Ալավերդի խանի միջոցով:

Այսպէս է պատմուել, թէ Ալավերդի խանը, որպէս հայ քրիստոնեայ թիֆլիսուցի, հազիւ թէ տասը տարեկան է լինում, որ բռնի կերպով կրօնափոխ են դարձնում:

Յետագային, երբ նա բարձր պաշտօնի եւ հանգամանքի տէր է դարձուել, ներքուստ պահում է իր քրիստոնէական հաւատքը եւ հայկականութիւնը, ուստի Շահի եւ պալատականների սարսափը սրտին ունենալով, ծպտուած է պահում իր հաւատքը եւ հայկականութիւնը: Ըստ վաւերական աղբիւրների Իրանի բարձրաստիճան դէմքերը երկար ժամանակաշրջան համար եղել են հայեր եւ զբաղեցրել են բարձր պաշտօններ պալատում, եղել են դեսպաններ, բժիշկներ, ոսկերիչներ, ժամագործներ, գորավարներ, ճարտարապետներ, ճարտարագէտներ եւ այլ կարեւոր հանգամանքներ:

Ալավերդի խանի կամուրջը կամ Սիսոէ ֆոլը ունեցել է 33 աշքեր որպէս խորհրդանիշ Յիսուսի երեսուն երեք տարիների կեանքը այս հողագնդի վրայ: Կամուրջը կառուցուել է Զայանդէ գետի վրայ եւ Նոր Զուղայի երկու հատուածները միացրել է միմեանց եւ ջուղայեցիք կարողացել են քայլելով կամ մեքենայով անցնել վրայից: Այս կամուրջը ունի երեք հարիւր մեթր երկայնք:

Չորս հարիւր տարի է անցնում այս գեղեցիկ կամուրջի կեանքից, բայց դեռեւս կանգուն է:

**ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆԸ ԻՐԱՆՈՒՄ ԵՒ ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼԻՔՈՒՄ**

Պատշաճ առիթը ունեցանք մօտէն տեսնելու եւ քանի մը լուսանկարներ վերցնելու հայ առաջին տպամեքենայից Իրանում եւ ընդհանուր Միջին Արեւելքում:

**ԴՈՎՏ. ԱՐՄԵՆ ԶԱԽՆԱԶԱՐԵԱՆԻ ՄԱՐԸ**

Շարունակուած էջ 13-էն

ցում է ստացել 1983 թ. Ապրիլում: 1974-1982 թթ. Արեւելքի ընթացքում որպէս ճարտարապետ՝ աշխատել է Պարսկաստանում, նաեւ մասնակցել Պարսկաստանում գտնուող հայկական յուշարձանների վերականգնման աշխատանքներին: Մասնակցել է շուրջ 6 տարի ղեկավարել է Պարսկաստանի Ատրպատական նահանգում գտնուող Սբ. Թադէոս առաքեալ, Մործոր Սբ. Աստուածածին - Դարաշամբի Սբ. Ստեփանոս նախավկայ վանքերի, ինչպէս նաեւ Սբ. Սանդուխտի մատուռի - Անդրեւորդու եկեղեցիների վերականգնման աշխատանքները:

Չափազրեւել, լուսանկարել եւ ուսումնասիրել է հայկական բազմաթիւ վանքեր, եկեղեցիներ Ատրպատականի տարբեր շրջաններում՝ Պարսպատունիքում (Ղարաբաղ), Ուրմիայում, Սալմաստում, Խոյունում, Արդաբիլում-Թաւրիզում: Համանման աշխատանքներ են տար-

կարելի էր տեսնել ինչ բարձր տեխնիկայով ու ճաշակով էր պատրաստուել այս տպամեքենան:

Իրապէս գնահատելի է, երբ 1636-1638 թթ. Նոր Զուղայի Ս. Ամենափրկչեան վանքի առաջնորդ Խաչատուր Վարդապետ Կեսարացու անխոնջ գործունէութեամբ եւ վանքի միաբանութեան ծանր աշխատանքով, վերջապէս յաջողուել է ի յայտ բերել տպամեքենայ, թուղթ եւ մելանը, առաջինը հանդիսանալով ոչ միայն Պարսկաստանում, այլ Միջին Արեւելքում:

Հազար փառք ու պատիւ այս պանծալի հայորդու Խաչատուր Վարդապետ Կեսարացու յիշատակին, որ իր համեստ եւ արժանի աշխատանքով սերունդներ կրթեց ու հազարաւոր մտքեր, գաղափարներ եւ գրուածքներ փրկեց կորուստից: Իրապէս Նոր Զուղայի թանգարանի բոլոր իրերը եւ առարկաները արժանի են տեսնելու, նրանց նկարելու եւ նրանց մասին խօսելու, սակայն յատուկ է տեղը եւ արժէքը այս կարեւոր տպամեքենայի:

**ԶԷՀԷԼ ՍՈՒԹՈՒՆԻ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ՊԱԼԱՏԸ ՊԱՀԵԼ ԷՐ ԻՐ ԾՔԵՆՈՒԹԻՒՆԸ**

Իսֆահան-Զէհէլ Սուլթանի պալատը Իսֆահանի ամենագեղեցիկ ու գլուխ գործոց ճարտարապետական կառուցանքներից է, որ կառուցուել է Շահ Աբաս Առաջինի օրօք, որ Շահ Աբաս Երկրորդն էլ եւս օգտուել է այս պալատից եւ յաւելուել կառուցանք է աւելացրել շէնքին: Այս պալատը ունի իր յարակից սենեակները եւ հսկայ սրահը, որ թագաւորի հիւրերը այտեղ են հիւրասիրուել եւ ժամանել: Մեծ սրահի պատերին նկարուած են թագաւորը՝ իր հիւրերով հիւրասիրուելիս եւ ապակիներով զարդարուած պատերը, որ առաւել գեղեցկացնում են պալատը:

Պալատի դիմացը գոյուլթիւն ունի մի հսկայ աւազան, որ պալատի քսան սիւների ստուերը ընկնելով բազմապատկում է սիւների թիւը քառասունի:

Տարեկան հազարաւոր այցելողներ են այցելում այս հոյակապ պալատը:

ուել նաեւ Նոր Զուղայում պահպանուած 13 եկեղեցիներում, Փերիայի եւ Զարմահայի երբեմնի հայաբնակ գիւղերում, որոնց գերեզմանոցներում պահպանուած եւ իւրայատուկ քանդակագործութեամբ աչքի ընկնող տապանաքարերը մշակութային եզակի արժէք են ներկայացնում:

1982-1985 թթ. Արեւելքի ղեկավարել է Թեհրանի Սբ. Գէորգ, Սբ. Գրիգոր եւ Վանաքի եկեղեցիների վերականգնման աշխատանքները:

1984-1994 թթ. Արեւելքի ընթացքում դասաւարդել է Ապրիլի պետական համալսարանի քաղաքաշինութեան ֆակուլտետում:

1996-1997 թթ. Արեւելքի մասնակցել է Սիրիայի Քեսապ քաղաքի երկու եկեղեցիների եւ բնակելի երկու շէնքերի վերականգնմանը:

1998 թ. «Հայկական ճարտարապետութիւնն ուսումնասիրող» կազմակերպութիւնը պաշտօնականացել է Երեւանում, եւ 2000 թ.

**ԳԱՂՈՒԹԱՐԱՅ ԿԵԱՆՔ  
ՐԱԼԵՊԻ «ՏԻՐՈՒՆԻ» ՄԻՈՒԹԵԱՆ 40-ԱՍԵԱԿԸ**

Հայէպի «Տիրունի» Ուսանողական եւ Երիտասարդական Միութեան հիմնադրութեան 40 ամեակին առթիւ, յառաջիկայ Կիրակի, Փետրուարի 7ին, 2010, նախատեսուած են գոյգ միջոցառումներ: Առաջինը յօբելինական հանդիսութիւն, որ տեղի պիտի ունենայ Հ.Բ.Ը.Մ.ի «Նազարեան» սրահին մէջ: Օրուան գլխաւոր բանախօսն է՝ Ալեքսան Գէօրգիսեան: Իսկ երկրորդ՝ հացկերոյթ-խորխոսանք, որ տեղի պիտի ունենայ միեւնոյն օրը երեկոյեան «Շահպարօզ» ճաշարանին մէջ: Այս առթիւ ելոյթ պիտի ունենայ լիբանանահայ հանրածանօթ սիրուած երգիչ Պերճ Նազազեան:

**60,000 ՐԱՅԵՐ Կ'ԱՊՐԻՆ ՍՊԱՆԻՈՅ ՄԵՉ**

Ներկայի Սպանիոյ մէջ կ'ապրին մօտ 60,000 հայեր: Անոնք ցրուած են տարբեր քաղաքներու մէջ: 95 տոկոս համեմատութեամբ Հայաստանէն եկած ըլլալով կազմած են նոր համայնք: Անոնք տնտեսական փայլուն վիճակ մը չունին ներկայիս: Իսկ միջազգային տնտեսական ճգնաժամին պատճառով եւ Սպանիոյ մէջ տիրող անգործութեան հետեւանքով՝ ոմանք սկսած են Հայրենիք վերադառնալ:

Համայնքին կրօնական կարիքները կը հոգայ Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն վերջերս նշանակուած Սասուն Ծ. Վրդ. Զմրուխտեանը: Գործող միութիւններու գուզահեռ ծիսական եւ թեմական կառույց մը ձեւաւորուելու ընթացքին մէջ:

Պարզելոնա քաղաքի թագաւորական պալատի ցանկապատին կից քանի մը ամիսներ առաջ Հայաստանի մէջ քանդակուած գեղեցիկ խաչքար մը գետեղուած է:

**ՓԱՐԻՉԻ ՐԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՈՒ ՆՈՐ  
ԲԵՍԱԴՐՈՒԹԻՒՆԸ «ԼՈՅՍ ՔԵՉ ՏԵՍՆՈՂԻՆ»**

Փարիզի Հայ Ուսանողներու Տան մէջ վերջերս տեղի ունեցած է ժիրաչր Անանեանի «Լոյս Քեզ Տեսնողին» թատերախաղին բեմադրուած ընթերցումը: Հայ Թատրոնի Ընկերակցութեան կողմէ կազմակերպուած այս բիէսի բեմադրիչն էր Արփի Յովհաննիսեան:

Նշենք նաեւ որ տասըչորս տարիէ ի վեր շարունակաբար կը ներկայացուին հայկական թատերական խաղացանկէն անտեսուած ու մոռցուած բիէսներ:

«Լոյս Քեզ Տեսնողին» սրամիտ երկխօսութիւններով կատակերգութիւն մըն է, ուր կը պատկերացուի Հայաստանի ներկայի անփառունակ վիճակը, ուր համատարած անգործութեան պայմաններու մէջ, ընտանիքներ ապրելու համար ստիպուած են իրենց տուները վաճառել:

**ՊՈԼՍՈՅ ԱՐԱՍ ՐՈՍԱՐԱԿՉԱՏՈՒՆԸ**

1993 թուականէն ի վեր Պոլսոյ մէջ կը գործէ Արաս հրատարակչատունը, հիմնուած Ս. Խաչ դպրեվանքէ խումբ մը սաներու կողմէ:

Արաս հրատարակչատունը հայ մշակոյթը ծանօթացնելու եւ անոր գիտակցութիւնն արթնցնելու իր առաքելութիւնը կ'ամփոփուի անցնող 17 տարիներու ընթացքին իր լոյս ընծայած աւլի քան 100 գիրքերու մէջ: Ան ցարդ հրատարակած եւ պոլսահայ երգիծանկարիչներու, գրողներու, մանկավարժներու, բանաստեղծներու, որակաւոր գործեր, ինչպէս նաեւ թրքերէնի թարգմանուած հեղինակներ՝ Զոհրապ, Մավեան, Սարոյեան, Օտեան, Անահիտ Տէր Մինասեան եւ ուրիշներ:

Յիշեցնենք որ ամէն Ուրբաթ, Պոլսոյ Բերայի թաղամասի Արաս գրատան մէջ տեղի կ'ունենայ թէյասեղան-հաւաք հայերէն լեզուի եւ թարգմանական աշխատանքի շուրջ:

Փետրուարից գրասենեակը գործում է Բաղրամեան 24րդ հասցեում: Ունի նաեւ իր մասնաձեւերն Ապրիլում, Լոս Անճելոսում եւ գործակիցներ տարբեր երկրներում: Գերմանիայի Քեոլն քաղաքում Հայոց առաջնորդարանին տրուած գերմանական բողոքական եկեղեցիի վերակառուցել է հայ առաքելական եկեղեցու ծիսակարգի համեմատ, որն էլ Սբ. Սահակ Մեսրոպ անուամբ 1999 թ. Յունուարին օծել է Ամենայն Հայոց Գարեգին Ա. կաթողիկոսը: Շուրջ 25 տարի եղել է «Երկիր եւ Մշակոյթ» հասարակական կազմակերպութեան վարչութեան կազմում:

Հայաստանում մասնակցել է մի քանի վանքերի եւ եկեղեցիների՝ Տաթև գիւղի Սբ. Մինաս եկեղեցու, Ապարանի Սբ. Խաչ եկեղեցու, Սաղմոսավանքի, Ուշի գիւղի Սբ. Սարգիս վանքում դամբարան-մատուռի, Արցախի Քարնի-

տակ գիւղի եկեղեցու եւ նշանաւոր Դաղիվանքի վերականգնման աշխատանքներին եւ ղեկավարել դրանք (ի դէպ, Դաղիվանքի վերականգնումն արդէն մօտ է աւարտին):

Հեղինակել է հայկական ճարտարապետութեանը նուիրուած աշխատութիւններ՝ «Nor Djulfa. Documents of Armenian Architecture» եւ «St. Thaddaeus Monastery. Documents of Armenian Architecture» եւ այլն, ընդ որում, Նոր Զուղային նուիրուած գիրքը Պարսկաստանի Յուշարձանների վարչութեան (Միրասէ Ֆարհանգի) նախաձեռնութեամբ թարգմանուել եւ հրատարակուել է պարսկերէն լեզուով: Հեղինակել է նաեւ մի շարք յօդուածներ, մասնակցել բազմաթիւ գիտաժողովների եւ բազմաթիւ երկրներում գեկոյցներով եւ ցուցահանդէսներով ներկայացրել հայկական ճարտարապետութիւնը: Ն.

**ԱՌՈՂՋԱՊԱՐԱԿԱՆ**

**ՍՈՒՒՆ ԵՒ ՍԽՏՈՐԻՆ ԲՈՒԺԻՉ  
ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

**ՍՈՒՆ**

Սոխին մէջ ջուրը կը կազմէ 80-85%, կը պարունակէ ազօթային նիւթեր, բջջաթաղանթ, կենսա-նիւթեր, եթերային իւղեր: Սոխը կը նպաստէ սեռային ցանկութիւններու ուժեղացման, կը կանխարգիլէ անօթնեղութիւնները, կ'արագացնէ արեան շրջանառութիւնը:

Խորոված սոխը օգտակար է հագի ժամանակ: Ճգմուած, հում սոխը կը նպաստէ մարմնի ցրտահարուած մասերու վերականգնման: Շատ օգտակար է սոխը ուտել կիսամեկ, խորոված, կիսատապկուած վիճակով:

Ուտելու համար կ'օգտագործուի նաեւ կանաչ սոխը, որ ոչ միայն օգտակար է, այլ նաեւ ախորժաբեր: Բուժական յատկութիւններով կարմիր սոխը աւելի առաւելութիւններ ունի, քան ճերմակը:

**ՍԽՏՈՐԸ**

Կը պարունակէ մինչեւ 55-60% ջուր, ածխաջրատներ՝ մինչեւ 30%, եթերաիւղեր, հարուստ է կենսանիւթերով: Սխտորը իր բուժիչ յատկութիւնները կը պարտի ailline

**ԻՆՉ ՈՒՏԵԼ ԱՒԵԼԻ ՀԱՆԳԻՍ ԶԳԱԼՈՒ ՀԱՍԱՐ**

Սովորական անհանգստութիւններ կարելի է դարմանել ճաշատեսակ փոխելով եւ ճիշդ ընտրութիւններ կատարելով:

- Եթէ ստամոքսի այրուածք է կը տառապիք

Նախապատուութիւնը տուէք կաթին եւ կաթնեղէններուն, եփած պտուղներուն եւ բանջարեղէններուն (որոնց բնաթելերը աւելի մեղմ կ'ըլլան), խմորեղէններուն, միսին եւ ձուկին (եփած):

Հրաժարեցէք կամ առնուազն սահմանափակեցէք սպառումը սուրճի, համեմներու, իւղոտ կերակուրներու, հում բանջարեղէններու:

- Եթէ սիրտի թէք է կը տառապիք

Առաջ ջուր խմեցէք, պտուղ եւ բանջարեղէն կերէք, պանրեղէն կերէք, բայց մանաւանդ քրանպըրի կոչուած պտուղին հիւթը խմեցէք, այս վերջինս անհանգստութեան պատճառ դարձող մանրէն կը չէզոք-

կոչուող ծծմբային նիւթին: Սխտորը կը նուազեցնէ իւղերու քանակը արեան մէջ, կը պակսեցնէ «վատ», իսկ կը բարձրացնէ «լաւ» քոլեսթրոլի քանակը, ունի ասփիրինի նման ազդեցութիւն, կ'իջեցնէ արեան մակարդեղիութիւնը: Ամէն օր՝ ճաշի ժամանակ, ուտել 2-3 պճեղ սխտոր, որ կը մաքրէ արեան անօթները, միզարտադրութիւնը, կը գրգռէ սեռային գեղձերու գործունէութիւնը, կը ցուցաբերէ հակաշարժախտային գործունէութիւն, կը բարձրացնէ օրկանիզմի կայունութիւնը փոխանցիկ հիւանդութիւններու նկատմամբ, կ'արգիլէ քաղցկեղային բջիջներու աճը:

Սխտորի չարաչառու մրցասական ազդեցութիւն ունի երիկամունքի հիւանդութիւններու ժամանակ: Երեկոյեան կէս կամ մէկ պճեղ սխտոր ծամելը ամբողջ կեանքի տեւողութեան կ'ապահովէ ակուններու ճերմկութիւն: Սխտորի տհաճ հոտէն ձերբազատուելու համար կարելի է խնձոր ուտել, ազատքեղի արմատ ծամել կամ բերանը ողողել կիտրոնի հիւթով:

**քացնէ:**

Հրաժարեցէք ճերմակ գինիէն եւ շամփանիայէն, նաեւ պնդութիւն պատճառով ուտելիքներէն:

- Եթէ աղիքային խանգարում է կը փորհարու թեքնէ կը տառապիք Նախապատուութիւնը տուէք Սեւըն ափին, մածունին, բրինձին, եփած ստեպղինին, միսին, ձուկին:

Հրաժարեցէք հում կամ եփած բանջարեղէններէ կամ անոնց հիւթերէն, կաթէն, գրգռիչ համեմներէն, իւղոտ ուտելիքներէն եւ տապկուած գեանախնձորէն:

- Եթէ անզարէ (միկրէն) կը տառապիք

Նախապատուութիւնը տուէք թէյին կամ սուրճին (ոչ 4 գաւաթէն աւելի), գետնախնձորին, բրինձին, մածունին, կրկնեփներուն, ճերմակ միսին:

Հրաժարեցէք ոգելից ըմպելիներէն, սուրճէն, խոզապուխտի տեսակներէն, պանիրի տեսակներէն:

**ՍԱՂԻՄԱՀԱՅՈՑ ԳԻՇԵՐԱՅԻՆ Ս. ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԸ**

**Շարունակուած էջ 8-էն**

վուրդը ապա կարգով մօտեցաւ եւ համբուրեց Ս. Խաչը եւ ստացաւ օրհնուած ջուր եւ աւանդական նշխարը:

Ապա եկեղեցուց կից սրահին մէջ բոլոր ներկաներուն սպասարկուեցաւ Բեթղեհէմեան աւանդական նախաճաշ:

Ներկաները ուրախ ու գուլարթ տարամադրութեան մէջ ըլլալով, ազգային ժողովրդական երգով ու պարով դիմաւորեցին Նոր Տարին ըստ հին տոմարի:

Այս առթիւ նաեւ բոլոր ներկաներուն բաշխուեցաւ աւանդական նարինջ եւ Տէրունական Աղօթքի Ուղղափառ Մեկնութեան գիրքէն օրինակներ:

Ուրախալի երեւոյթ է նաեւ տեսնել ոչ-սաղիմահայոց մասնակցութիւնը եւ այս առաւել կը քաջալերէ մեզ, տալով վկայութիւնը որ հաւատացեալք՝ որպէս ուխտաւորներ կու գան Բեթղեհէմեան այս սուրբ գիշերային արարողութեանց հոգեւոր պահ-

մը ապրելու մարդ եւ Աստուած գերերջանիկ աղօթքի հանդիպումով:

Յիշատակելի եւ անմոռաց երեկոյ մը եղաւ Մեր Փրկչին Յիսուս Քրիստոսի Ս. Ծննդեան տասնըմէկերորդ այս հոգեզմայլ արարողութիւնը:

Երուսաղէմի Սրբոց Թարգմանչաց Վարժարանի Սանուց Միութիւնը շնորհակալութիւն կը յայտնէ Առաջնորդ Սրբազան Հօր եւ հոգեւորականաց դասին, ինչպէս նաեւ Ս. Յովհաննու Եկեղեցուց հովիւին եւ հոգաբարձութեան, եւ սարկաւազներ Բրշ. Հրայր Սրկ. Գարակէրտեանին, Բրշ. Մաշտոց Սրկ. Չօպանեանին, Բրշ. Տօքթ. Սարգիս Սրկ. Մեսրոպեանին, Բրշ. Հրայր սրկ. Նալպանտեանին, Բրշ. Յովսէփ Սրկ. Մելքոնեանին եւ Բրշ. Գէորգ Սրկ. Հայրաձեանին որոնք իրենց մասնակցութիւնը բերին եւ հոգեզմայլ աղօթքներով ու շարականներով փառաւորեցին մեր Տիրոջ Ս. Ծննդը բեթղեհէմեան սուրբ գիշերով:

**ՄԵԿ ՕՐՈՒԿՅ ԽԻՍՏ ՍՆՆԴԱԿԱՆՈՆԸ  
ՕԳՏԱԿԱՐ ԶԻ ԴԱՌՆԱՐ**

Կարգ մը անձեր կը թեքին խիստ աննդականոնի դիմելու. օրինակի համար մածունով ապուր, կանաչեղէնով ապուր կամ որոշ տեսակի պտուղներ ուտելով չափաթը մէկ անգամ (կամ աւելի), պահելու համար իրենց վայելչակազմութիւնը: Արդեօք այս քայլը յաջող միջոցառում մը կը համարուի: Այս հարցումին այս ձեւով կը պատասխանեն սննդաբանութեան մասնագէտները:

Այս ձեւը օգտակար քայլ մը է, որովհետեւ այդ հաւանաբար չ'ապահովէր վայելչակազմութիւնը պահելու կամ մի քանի քիլոկրամներ կորսնցնելու պահանջուած խթանը: Հոս նկատի պէտք է առնել, թէ ծանրութիւն կորսնցնելը առանձին բաւարար է, այլ հարկ է նաեւ տարիներու ընթացքին զայն կայուն եւ անշարժ պահել:

Հոս նշուած է առողջապահական միջին եզր մը կիրարկելու անհրաժեշտութիւնը, որովհետեւ օրինակելի եւ երեւակայական կշիռ մը սահմանելը եւ ամէն միջոցներով անոր հասնելու ցանկութիւնը ունենալը, նոյնիսկ առողջութեան եւ տրամաբանութեան հաշուին, ընդունելի եւ չարատեւ ձեւով իրագործուելու ենթակայ եղող կիրարկումներ չեն:

Արագորէն եւ չսերտուած ձեւով ծանրութիւն կորսնցնելը կը մղէ յետադարձ արագ վերստին աւելնալու, եւ այս կէտէն է որ մենք կ'ուզենք խուսափել: Ան որ կ'որոշէ նիհարնալու համար որոշ սննդականոնի հետեւիլ, հասնելու համար առողջարար եւ

իրատես կշիռ քի, հարկ է որ իր այդ որոշումին յանձնառու ըլլայ իր կեանքի յետագայ բոլոր հանգրուաններուն ընթացքին:

Պէտք է յիշել, որ յիշուած սննդականոնը գործնական է, որովհետեւ ծանրութիւնը կորսնցնելը կ'իրականանայ բացասական հաւասարակշռութեան որպէս արդիւնք՝ սպառած քալորիներու եւ օրերու ընթացքին հալած ճարպերու միջեւ, եւ ոչ թէ մէկ օրուան համար խիստ սննդականոնի հետեւելու որպէս արդիւնք:

Ախորժակիդ սահման դնելու եւ անօթութեան անակնկալ ախտանշանը դիմադրելու համար, քեզի կը տրամադրենք հետեւեալ գործնական միջոցները.

\* Ճարպերէ գուրկ եղող մէկ գաւաթ տաք կաթ խմէ, որովհետեւ պաղ կաթը կուշտ ըլլալու զգացումը չի տար (տակաւին անորոշ եւ անյստակ պատճառներով):

\* Խաշուած հաւկիթ մը կեր, որովհետեւ ան հարուստ է փրօթէյինով եւ աղքատ՝ քալորիներով: Կարգ մը անձեր ժամերով կուշտ կը զգան հաւկիթ ուտելէ ետք:

\* Մէկ քառակուսի ռեժիմի տուրմ կեր մէկ մեծ գաւաթ ջուրով, 3 հիմնական ճաշամերէտ առաջ:

\* Հիմնական կամ երկրորդական ճաշերը ուտելէ ետք ակունները վրձինել, ընտրելով անանուխի համ ունեցող ակունայի դեղերը:

\* Շաքարէ գուր եղող ծիթ ծամէ մինչեւ համախանութիւնը սահմանած ուտելու ժամանակը:

**ՎԵՐՋԻՆ ՅԱՐԳԱՆՔԸ  
(ԻՐԱԿԱՆ ԴԵՊԸ)**

**ՀԱՐՄԻԿ ԅԱԿՈՐԵԱՆ**

Մենք նորեկներս երբ գալիս ենք ԱՄՆը հանդիպում ենք նոր լաւ եւ կամ վատ սովորութիւններին, որոնցից մէկին ուզում եմ պատմել, անդրադառնալ:

Մի մեծ քաղաքի օդակայարանում սպասում էի իմ հերթին: Օդակայարանի դահլիճը լիքն էր ճամբորդներով եւ շարունակ լսուում էր զանազան ձայներ եւ յատկապէս բարձրախօսը շարունակ յայտարարում էր զանազան թուիչքների ժամը եւ վայրը:

Եւ ահա այդ ժամանակ վեցը ամերիկեան գինուորներ արագ քայլերով ժողովուրդը ճեղքելով գնացին դէպի ելքի դուռը: Այդ քայլը մեզ շատերիս հետաքրքրութիւնը շարժելով մենք էլ մեր հերթին մօտեցանք պատուհանին տեսնելու այդ գինուորների շտապ քայլերի պատճառը: Եւ ահա տեսանք որ օդանաւից դուրս են բերում մի դազադ, ամերիկեան դրօշով ծածկուած, որ հաւանաբար Աֆղանիստանի կամ Իրաքի զոհերից մէկն էր: Այդ վեց գինուորները դազադը իրենց ուսերին դրած դանդաղաքայլերով գնում էին դէպի դիակառքը որ կանգնած էր բաւականին

հեռու: Այդ ժամանակ մի հոգի որ հաւանաբար հին գինուոր էր, ճամբորդների միջից բարձրացաւ մի աթոռի վրայ եւ բարձրաձայն յայտարարեց:

- Ով որ գինուորական ծառայութիւն արել է, թող գինուորական պատուի կենաց, իսկ մնացածները թող աջ ձեռքը դնեն կրծքին եւ լուռ կենան մէկ բուռ: Եւ ով զարմանք բոլորը միասին մէկ մարդու նման հնազանդուեցին եւ տիրեց քար լուծութիւն:

Մինչեւ անգամ օդանաւակայանի բարձրախօսն էլ դադարեց յայտարարութիւններ տալուց: Այդ ժամանակամիջոցում նորեկ ճամբորդները եւ կամ օդակայանի գործաւորներից մի քանիսը երբ ներս էին մտնում, ինքնաբերաբար հնազանդուելով ընդհանուր տեսքին, իրենք էլ միանում էին ժողովուրդին:

Այդ հանգամանքը տեսեց մինչեւ գինուորի դիակառքը լրիւ հեռացաւ: Դահլիճը նորից անցաւ իր սովորական եռուզեռին:

Ահա մի լաւ սովորութիւն որն ինձ վրայ շատ ուժեղ տպաւորութիւն թողեց, յուզեց եւ որ չպիտի մոռանամ երբէք:

**Չեր Ճանուցումները Վստահեցեք**  
**«Մասիս» Շաբաթաթերթին**  
T: (626) 797-7680 F: (626) 797-6863  
massis2@earthlink.net

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՉՈՐՍ ՄԱՐԶԻԿԱՆԵՐ ԿԸ ՄԱՍՆԱԿՑԵՆ ՎԱՆՔՈՒՎԸՐԻ ՉՍԵՌԱՅԻՆ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐԻՆ

Փետրուարի 12-ից Մարտի 1-ը Քանադայի վանքուվեր քաղաքում անցկացուցելիք ձմեռային օլիմպիական խաղերին Հայաստանից կը մասնակցեն չորս մարզիկներ: Ըստ Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի մամուլի ծառայության, վանքուվեր կը մեկնեն դահուկավազորուհի Սերգէյ Միքայէլեանը (Աշոցք, արագավազք եւ 15 կմ), Քրիստինէ Խաչատրեանը (Գիւմրի, արագավազք եւ 10 կմ), լեռնադահուկորդներ, ամերիկահայ Անի-Մաթիլդա Սերբերակեանը եւ ծաղկածորցի Արսէն Ներսիսեանը (երկուսն էլ՝ հսկայ ոլորավայրէջք):



Նշուած մարզիկները մասնակցութեան մասին ՀԱՕԿ-ը ՄՕԿ-ի պաշտօնական գրութիւնը ստացել է Յունուարի 25-ին:

ԸՍԲՇԱՄԱՐՏԻ ԱՇԽԱՐՀԻ ԳԱԲԱԹԻ ԽԱՂԱՐԿՈՒԹԻՒՆԸ ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ ԿԸ ՄԱՍՆԱԿՑԵՆ ՈՒԶՊԵՔԻՍՏԱՆԸ ԿԱՄ ՇՈՒԲԴԻԱՆ

Ատրպէյճանի յունահռոմէական ոճի ըմբշամարտի հաւաքականը հրաժարուել է մասնակցել Փետրուարին Երեւանում կայանալիք Աշխարհի գաւաթի խաղարկութեանը: Այս կապակցութեամբ ՖԻԼԱ-ն բանակցութիւններ է վարում ատրպէյճանական կողմի հետ, որպէսզի այդ երկրի հաւաքականը փոխի որոշումը եւ մասնակցի մրցաշարին: Եթէ Ատրպէյճանն այնուամենայնիւ չժամանի Երեւան, ապա ՖԻԼԱ-ն պատժամիջոցներ է կիրառելու այդ երկրի ֆեդերացիայի նկատմամբ: Նախատեսուած է, որ Աշխարհի գաւաթի խաղարկութիւնում ատրպէյճանցիներին կը փոխարինի կամ Ուզբեքիստանի հաւաքականը կամ Շուէտիայի: Յիշեցնենք, որ Փետրուարի 12-14-ը կայանալիք մրցաշարին բացի Հայաստանի հաւաքականից կը մասնակցեն նաեւ Ռուսաստանի, Վրաստանի, Հունգարիայի, Թուրքիայի, Իրանի եւ Քուպայի ուժեղագոյն ըմբշները:

Ա. ԹԵՅՍՈՒՐԵԱՆԸ ԵՒ Ռ. ԳՐԻԳՈՐԵԱՆԸ ՀԵՌԱՆՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՑ ԱԿՈՒՄԲՆԵՐԻՑ

Անգլիական «Ֆուլհեմի» եւ Իրանի ազգային հաւաքականի հայազգի կիսապաշտպան Անդրանիկ Թեյսուրեանը մտադիր է հեռանալ անգլիական ակումբից, քանի որ արդէն երկար ժամանակ է ինչ խաղային ժամանակ չի ստանում թիմի հիմնական կազմում: «Ուզում եմ հեռանալ «Ֆուլհեմից», քանի որ ինձ դուր չի գալիս ստեղծուած իրավիճակը: Ես խնդրեցի գործակալիս ակումբ գնտել: Հիասթափուած եմ այն բանից, որ չեմ խաղում», - ասել է Թեյսուրեանը: Ըստ նրա, ինքը կարող է արդէն յաջորդ շաբաթ սեղափոխուել այլ ակումբ, քանի որ իր ծառայութիւններով հետաքրքրուած են եւրոպական այլ ակումբներ, որոնց անունները իրանահայ ֆուտպոլիստը հրաժարուել է հրապարակել:



Լիպեցկի «Մետալուրգի» հայազգի մէկ այլ յարձակուող Ռոման Գրիգորեանը մտադիր է յառաջիկայ մրցաշրջանն անցկացնել Նովոռոսիյսկի «Չերնոմորեցում»: Ինչպէս տեղեկանում ենք ռուսական լրատուամիջոցներից, հայազգի յարձակուողն արդէն համաձայնութիւն է ձեռք բերել «Չերնոմորեցի» հետ եւ սկսել է մասնակցել թիմի մարզումներին: Նշենք, որ «Չերնոմորեցը» հանդես է գալիս Ռուսաստանի առաջին կարգում:

ԵՐՈՒՒՄ

Շարունակուած էջ 14-էն

Տոլստոյի եւ Մաքսիմ գորկու մասին:

Արփիար Արփիարեանի չարանենգ սպանութիւնից յետոյ, իր գրական կախարհը ուսուցչի յիշատակը յաւերժացնելու համար, Երուխանը 1908 թ. Փետրուարի 27-ից մինչեւ 1908 թ. Յունիսը վարում է «Լուսաբեր» եռօրեայ թերթի խմբագրի պաշտօնը: Նրան այս գործում աջակցում է վահան Թէքէեանը:

1908 թ. Յունիսի 10-ը: Թուրք-իւլում տեղի է ունենում պետական յեղաշրջում: Իշխանութեան գլուխ են անցնում Երիտասարդ Թուրքերը, որոնք տարիներ շարունակ մեղրածոր խոստումներով շլացրել էին ոչ միայն Թուրք, այլեւ Օսմանեան իշխանութեան տակ բնակուող այլալեզու եւ այլակրօն ժողովուրդներին:

Հնչում է վերադարձի ժամը: Կ. Պոլիսը գրկաբաց կանչում է «օտար աստղերի տակ նժդեհութեան սեւ մրուրը քամած» («Արեւելք») իր որդիներին: Օսմանեան նոր սահմանադրութեան շուրջ խոստումների, հրապարակեց բացականչութիւնների եւ որոտընդոտ կեցցէների օրերին Կ. Պոլիս է ժամանում նաեւ Երուխանը:

1908 թ. Օոստոսի 7-ին նա նշանակուած է «Արեւելք» օրաթերթի խմբագիր՝ պաշտօնից հեռացած դոկտոր Թոփչեանի փոխարէն:

Երուխանի ստեղծագործութեան յետահամադրական շրջանը ընդգրկում է 1908-1915 թթ., որ տեւում է շուրջ եօթ տարի: Այս շրջանում առաւել աչքի է ընկնում Երուխան-հրապարակախօսը: Պատկառելի է նրա այս տարիների հրապարակախօսական ժառանգութիւնը: Երուխանի հրապարակախօսութեան անկրկնաքարերն են դառնում հայ

ժողովրդի ազգային ազատագրութեան, ինքնավարութեան, ինքնահանազման, կենսական ուժերի մոբիլիզացման եւ նրա երկու հատուածների մերձեցման հարցերը: Երուխան-խմբագիրը աշխատում է օգտագործել Օսմանեան սահմանադրութեամբ շնորհուած մամուլի ազատութիւնը: «Արեւելք»-ում նա բացում է «Ազատ կարծիքներ» բաժինը, որտեղ տպագրում է ժամանակաշրջանի յուզող հարցերի վերաբերեալ համարձակ յօդուածներ: «Արեւելք»-ում, որպէս թերթօն, սկսում է հրատարակել Բաֆֆու «Սամուէլ» պատմավէպը: Երուխանն իր թերթում լուրջ ուշադրութիւն է նուիրում հայ ժողովրդի երկու հատուածների կուլտուրական մերձեցման հարցերին: Թերթում յաճախակի երեւում են յօդուածներ եւ հաղորդումներ արեւելահայ գրողներ Խ. Աբովեանի, Գ. Մնուղուկեանի, Ալ. Ծատուրեանի, Ալ. Շիրվազադէի եւ միւսների մասին: 1910 թ. Ապրիլի 11-ից գրողը իր խմբագրած թերթում, որպէս թերթօն, հրատարակում է «Վիպաթերթ»-ում տպագրուած «Մեր ժողովուրդ» նոր՝ «Ամիրային աղջիկը» վերնագրով եւ հսկայ փոփոխութիւններով: Խմբագրական աշխատանքին գլուխն թաց այս տարիներին նա կատարում է նաեւ այլ բնօրինակ աշխատանքներ: 1908 թ. Դեկտեմբերին Երուխանը նշանակուած է Կ. Պոլիսի ազգային կենտրոնական վարժարանի աշխարհաբար հայերէնի դասատու, սակայն երկու ամիս աշխատելուց յետոյ հեռանում է՝ դժգոհ տիրող անկարգապահութիւնից: 1909 թ. երեք-չորս ամիս նա եղել է Խապուրդի թաղային խորհրդի անդամ: Բաբերդից ընտրուել է Ազգային ժողով երեսփոխան: (Շարունակելի 1)

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկանաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝ հաճեցէք կապ պահել մեզի հետ: G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104 Norserount@sbcglobal.net

INVITATION FOR BIDS (IFB) NO. 1688 ADA UPGRADE OF RESTROOMS AND RECEPTION COUNTER AT SAN FERNANDO GARDENS The Housing Authority of the City of Los Angeles (HACLA) invites vendors to submit firm fixed price bids for the ADA Upgrade of Restrooms and Reception Counter at the San Fernando Gardens Housing Development located at 10995 Lehigh Ave., Pacoima, CA 91331. Copies of the IFB documents may be downloaded at www.hacla.org/cgs. Technical questions may be directed to Project Manager Hector Areola at 213-252-4266. Bids will be accepted at 2600 Wilshire Blvd., 3rd floor, Los Angeles, CA 90057 until February 12, 2010 at 2:00 p.m. (local time). 1/28/10 CNS-1778430# MASSIS WEEKLY

INVITATION FOR BIDS (IFB) NO. 1700 RESTORATION OF EXISTING (12) UNITS OF APARTMENTS AT NICKERSON GARDENS AND RANCHO SAN PEDRO The Housing Authority of the City of Los Angeles (HACLA) invites vendors to submit firm fixed price bids for the restoration of existing twelve (12) units of apartments located at: Nickerson Gardens, 1360-1366 114th Street, Los Angeles, CA 90059 and Rancho San Pedro, 103-117 W. Santa Cruz Street, San Pedro, CA 90071. Copies of the IFB documents may be downloaded at www.hacla.org/cgs. Technical questions may be directed to Project Manager, Hector Areola at 213-252-4266. Bids will be accepted at 2600 Wilshire Blvd., 3rd floor, Los Angeles, CA 90057 until February 3, 2010 at 2:00 p.m. (local time). 1/28/10 CNS-1779105# MASSIS WEEKLY

**GENERAL CONTRACTOR BID REQUEST**  
Qualified Consulting firms are invited to submit Statements of Qualifications by 5:00 PM, February 22, 2010 for Project Number E09-27, Design of Aircraft Ramp Reconstruction to provide design services for the reconstruction of the commercial aircraft parking ramp, installation of 400hz power, installation of hydrant fueling system and initiation of a GIS data base at the Bob Hope Airport. A Request for Qualifications package can be obtained directly from the Bob Hope Airport Web site at bobhopeairport.com under Business Opportunities. All Proposers shall register with the Airport Engineering Department either via web site or in person. Proposals submitted by firms who have not registered with Airport Engineering will be considered non-responsive. A pre-submittal conference will be conducted on February 4, 2010 at 10:00 AM at the Engineering Office of the Bob Hope Airport, 2800 Clybourn, Burbank, California. Access from the intersection of Sherman Way and Clybourn.

### ՀՐԱՆԴ ՏԻՆՔԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՅԻՇԱՏԱԿԻ ՁԵՌՆԱՐ

Շարունակում է 1-ին

հարևարակում ներկայանում:

Բեմին վրայ գետնողում էր Հրանդ Տինքի մեծադիր նկարը: Օրոտան հանդիսավարն էր սոյն միջոցառումը կազմակերպող Պուլսայ Միությունից Մշակութային Յանձնարարության ատենապետ՝ Յովհաննես Գուլախ-Ալեքսիան որ մեկ վայրկեան յոտնկայ լուծվելու առաջարկեց ի յիշատակ Հրանդ Տինքի: Այնուհետև Յ. Գուլախ իր ելույթով դատապարտեց խօսքի ազատության ռազմավար Հրանդ Տինքի դեմ կատարված անարդ օճիրը, որ նախածրագրված մեծ դառ մըն էր, որուն հեղինակները ցարդ անպատիվ կը մնան:

Այս առթիվ խօսք առաւ նաեւ «Տը Արմինիըն Օպերովը» թերթի խմբագիր Օշին Քէշիշեան: Ան վերջերս նոր վերադարձած ըլլալով իսթանբուլըն մասին եւ յայտնեց որ շուրջ 60 հազար հայաստանցի հայերու 15,000-ի հասնող զաւակները առանց դպրոցի կը մնան Պոլսոյ մէջ, քանի որ «այգորէն» (illegal) բնակիչները կը համարուին այդ երկրին: Օշին Քէշիշեան խօսելէ ետք թուրքիոյ երեւութական ազատութիւններու եւ «Ակոս» թերթի խմբագրատունն իր տուած այցելութեան մասին եկաւ միեւնոյն եզրակացութեան որ Հրանդ Տինքի պատգամն էր «Մնալ հայ եւ տէր կանգնիլ մեր իրաւունքներուն...»:

Աշուղական երգերու մեկնա-

բան սիրուած երգիչ Լեւոն Գաթրճեան այս առթիւ երգեց իր նոր ստեղծագործութիւններէն՝ Հրանդ Տինքին նուիրուած երգ մը՝ «Մենք պիտի տոկանք մեր ճանապարհին»:

Այնուհետև ցուցադրուեցաւ Հրանդ Տինքի նուիրուած շարժապատկեր մը «Մենք ըմպեցինք նոյն ջուրը» խորագրով, պատրաստուած արտադրիչ Սերժ Ալեքսիանի:

Շուրջ մէկ ժամ տեւող ֆիլմը Հրանդի անձին աւելի իր հօրենական ծննդավայրի մասին էր: Թէեւ հետաքրքրական մասեր ունէր, բայց կրկնութիւնները եւ գայն երեք լեզուներով ներկայացնելն ու յայտագրի երկարատեւ ըլլալը տարբեր տպաւորութիւն ձգեց հանդիսականներուն մօտ...: Ֆիլմը կը կարօտի վերանայումի եւ որոշ կրճատումներու...:

Օրոտան վերջին խօսք առնողն էր Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի առաջնորդական ընդհանուր փոխանորդ Հոգ. Տ. Տաճատ Մ. Վրդ. Եարտրմեան: Ինք եւս անդրադառնալով ցեղասպանութեան վերջին գոհին՝ Հրանդ Տինքի անարդ պատմութեան ըսաւ. «Յաւերժ է հայ ժողովուրդը իր մշակութիւնով ու քաղաքակրթութեամբ եւ եզրակացուց նորանոր յաղթանակներու յոյսով պէտք է նայինք «Լոյսի Հայրենիքին»...»:

Հայր Տաճատի «պահպանիչ» աղօթքով վերջ գտաւ յիշատակի հանդիսութիւնը:

Գ. Մ.

### «ԴԻԼԻՉԱՆ» ՆՈՐ ՉԱՓԱՆԻՇ ԿՏՐԵՑ

Շարունակում է 7-ին

վառութիւնն ու երաժշտութեան ներդաշնակութիւնը: Trio in F Sharp Minor-ի գերազանց կատարողութեամբ հանդէս եկան Մովսէս Պողոսեան (ջուլթակ), Րոլանտ Լեոնարտ (cello), եւ դաշնակի վրայ Արթուր Ավանեսով: Անոնք խորը ապրումով, նուիրումով ու գեղարուեստական բարձր կատարողութեամբ մեկնաբանեցին Առնօ Բաբաջանեանի գործերէն՝ Largo-Allegro espessivo-5, Ardante-ն, Allegro Vavace-ն:

Երաժշտական գեղարուեստի կատարողութիւնը իր գէնիթին հասցուցած «Դիլիջան» սենեկային երաժշտութեան հինգերորդ եղանակային չորրորդ համերգը արժանի է մեր ամբողջական գնահատութեան: Նմանապէս, մեր անմնացորդ գնահատանքին արժանի է «Դիլիջան»-ի գեղարուեստական ղեկավար Մովսէս Պողոսեանը, որ ոչ մէկ ջանք կը խնայէ գեղարուեստական երաժշտութիւնը պահելու մակարդակի մը վրայ, որ հպարտութիւն կը ներշնչէ մէն մի հայու, նաեւ կը նրբացնէ անոնց երաժշտական ճաշակը, անոնց առջեւ բանալով երաժշտական բարձր արուեստի ներքին ոլորտները: Այս տեսանկիւնէն դիտած՝ կը գտնենք, թէ «Լարք» երաժշտական Ընկերակցութիւնը յաջողած է իր սրբազան առաքելութեան մէջ, որ է՝ վառ պահել, տարածել եւ սիրցնել հայ

երաժշտութիւնը, յանուն մեր գոյութեան պահպանման:

«Դիլիջան» սենեկային երաժշտութեան եղանակային չորրորդ փառահեղ համերգի յաղթական աւարտը տօնախմբուեցաւ պաշտօնական ճաշկերոյթով մը, որ տեղի ունեցաւ ձեռնարկէն անմիջապէս վերջ, Հայթայեան եղբայրներու՝ Փասատենայի Օլտ Թաուն գտնուող «Սանթորին-Ռօօօ-գօ» շքեղ ճաշարանին մէջ, ներկայութեամբ երաժշտասէր հոծ բազմութեան մը: Ընթրիքէն ետք, հանդիսավարութեան տակ Փրօֆ. Օշին Քէշիշեանի՝ «Լարք» երաժշտական Ընկերակցութեան շքանշաններով պարգևատրուեցան՝ Soprano Մարիա Ապաճեան եւ Արթուր Ավանեսով: Ելույթ ունեցան երգահան Տիգրան Մանսուրեան, «Լարք»-ի Գործադիր Տնօրէն եւ տաղանդաշատ խմբավար Վաչէ Պարսումեան, որ շնորհակալութիւն յայտնեց Հայթայեան եղբայրներուն, որոնք հոգացին ճաշկերոյթի ծախսերը, լրիւ հասցիքը նուիրաբերելով «Լարք» երաժշտական Ընկերակցութեան: Ելույթ ունեցան նաեւ Soprano Մարիա Ապաճեան եւ Արթուր Ավանեսով, որոնք յայտնեցին իրենց ուրախութիւնն ու գնահատանքը ի տես «Լարք»-ի գործունէութեան ու հայ արուեստասէր հասարակութեան:

Ողջունելի ձեռնարկներ, որոնց համար կը շնորհաւորենք անխտիր բոլոր պատասխանատուները:

### ՄԻ ՔԻՉ ԵՐԿԱՐ Է, ԲԱՅՑ ՈՉԻՆՉ

Շարունակում է 2-ին

նման պետութեան:

Աւուր է նաեւ այն մասին, որ միջազգային հանրութիւնը Ղարաբաղի հարցը փորձում է կարգաւորել տարածաշրջանի խաղաղութիւն ու կայունութիւն ապահովելու համար: Դա թերեւս ոչ պակաս մանկական պնդում է, քան իրանի դէմ ռազմարշաւի վերաբերեալ մօտեցումը: Բանն այն է, որ տարածաշրջանի խաղաղութիւնն ու կայունութիւնը եթէ գերտէրութիւններից որեւէ մէկին հետաքրքրում է, ապա միայն այն բանից յետոյ, երբ նա իր համար անդառնալիօրէն կամ գոնէ միջնաժամկէտ առումով լուծած կը լինի տարածաշրջանում իր դոմինանտութեան հարցը: Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորումը հենց այդ, ոչ թէ կայունութեան եւ խաղաղութեան հարցը լուծելու միջոց է գերտէրութիւնների համար: Եւ նոյնը նաեւ հայթուրքական յարաբերութիւնը: Խնդիրը պայքարն է Կովկասի համար, որը ձգուած է արդէն մօտ երկու տասնամեակ, եւ կարծես թէ առնուազն այդքան էլ կարող է ձգուել, քանի որ շահերը շատ բազմազան են, ներգրաւուած տէրութիւնները՝ բազմաթիւ:

Դա իհարկէ նշանակում է, որ այդ շահերի հակասակնութեան շնորհիւ մեծ է Ղարաբաղի հարցում ստատուս-քվոն պահելու հաւանականութիւնը, նոյնիսկ այն դէպքում, եթէ դրա հիմնական երեք կրողներից մէկը՝ Հայաստանը, կամ երկուսը՝ Հայաստանն ու Ղարաբաղը, հրաժարուեն ստատուս-քվոյից: Բանն այն է, որ ստատուս-քվոյից հրաժարուելը դեռ քիչ է այն փոխելու համար, քանի որ դեռ պէտք է համաձայնութիւն լինի նոր ստատուս-քվոյի վերաբերեալ: Իսկ ներկայիւր, ինչպէս գիտենք, ձեռք է բերուել արիւնալի պատերազմի գնով: Ստատուս-քվոն թիւ թան չի, դրա շուրջ այդքան էլ հեշտ չեն պայմանաւորուած: Յամենայն դէպս, Կովկասում դրա ամէն մի փոփոխութիւն կատարուել է կատարուում է պատերազմի միջոցով, ինչի վառ վկայութիւնը 2008 թուականի Օգոստոսի պատերազմն է: Դա էլ ի հակադրութիւն այն տեսակէտի, թէ ստատուս-քվոն պահելը հանգեցնելու է պատերազմի: Թերեւս աւելի հաւանական է հակառակը, որ պատերազմով են ստատուս-քվոնները փոխուում Կովկասում, որովհետեւ դրանց շուրջ շահերի հակասակնութիւնն այնքան մեծ է, որ խա-

ղաղ համաձայնութիւնը դառնում է անհնար:

Բայց, արդեօք շահերի հակասակնութեան եւ բախման վրայ ստատուս-քվոն պահելու կարծես թէ երկարաժամկէտ հնարաւորութիւնը նշանակուած է, որ իրավիճակը Հայաստանի համար նպաստաւոր է եւ չկայ խուճապի կամ պարտուողական տրամադրութեան կարիք: Խուճապի եւ պարտուողական տրամադրութեան կարիք իսկապէս չկայ, բայց չկայ նաեւ կարիք մտածել, թէ իրավիճակը Հայաստանի համար բարենպաստ է: Բանն այն է, որ Հայաստանի համար բարենպաստ իրավիճակ կարող է լինել այն դէպքում, երբ առկայ զարգացումներում Հայաստանը ստատուս-քվոյի իր բաժնից բացի ունենայ աշխարհին առաջարկելու այլ բան, այլ արժէք: Հայաստանն իր անկախութեան մօտ 20 տարիների, եւ Ղարաբաղի հակամարտութեան հրադադարի 16 տարիների ընթացքում չի ստեղծել աշխարհին առաջարկելու որեւէ բան, իսկ ժողովրդավարական կղզեակի տարբերակն էլ, որ սկսել էր ուրուագծուել 1990-ականների սկզբին, 1990-ականների կէսերից արդէն սկսեց անխնայ մսխուել: Եւ այսօր Հայաստանը տարածաշրջանային գործընթացներին ընդամէնը մասնակցում է այդ ստատուս-քվոյի պաշարով, ընդամէնը յայտնելով դրա մի մասից հրաժարուելու պատրաստակամութիւն:

Գուցէ եթէ չլինէր այն յոյսը, որ միջազգային շահերի հակասականութեան շնորհիւ հնարաւոր կը լինի զիջման մասին խօսելով, այդուհանդերձ պահել եղածը՝ չզիջել, Հայաստանն աւելի արդիւնաւէտ գործեր եւ ստեղծեր միջազգային գործընթացների մէջ ներգրաւուելու այլ արժէք: Իսկ այդպիսին կարող էր լինել այն, որ Հայաստանը դառնար Հայրաւային Կովկասի ամենաարդիական պետութիւնը, դառնար Հայրաւային Կովկասի տեխնոլոգիական կենտրոն, ուր արմատաւորուէին ու կիրառուէին կառավարման, հասարակական, տնտեսական, քաղաքական փոխարարներութիւնների ժամանակակից որակները: Մինչդեռ, դրանցով ստատուս-քվոյի վրայից բեռը հանելու փոխարէն, Հայաստանի վերնախաւերը այդ ստատուս-քվոն են դիտարկել եւ դիտարկում իրենց վրայից արդիականութեան եւ որակական փոփոխութիւնների իրականացման համար պատասխանատուութեան բեռը հանելու միջոց:

### ՅԱԼԱՅԱԿԱՆ

Տէր եւ Տիկ. Յովհաննէս Մկրեան եւ Շուշիկ Երեւանեան-Մկրեան իրենց հօրեղբօր ԻՍԱՀԱԿ ԵՐԵՒԱՆԵԱՆԻ մահուան տխուր առթիւ իրենց խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի զաւակներուն եւ համայն ընտանեկան պարագաներուն: Առ այդ փոխան ծաղկեպսակի հետեւեալ նուիրատուութիւնները կը կատարեն.  
«Մասիս» շաբաթաթերթին \$100  
Կիլիկեան Կրթական Միութեան \$100

### ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ

ՇՆՈՒՄՏԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ  
CHARTER CABLE 26-ՐԴ ԿԱՅԱՆ  
(ԿԼԵՆՏԷՅԼ, ՊԵՐՊԵՆԵ, ԼԱ ԶՐԵՄԵՆՈՒ)

ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄՆ 10:00-11:00

### ՔԱՋ ՆԱԶԱՐ ՌԻԴԻՂ ԵԹԵՐ ՇՕ

Ամէն Կիրակի երեկոյեան  
ժամը 10:00-ից 12:00  
Կլէնտէյլի 26-րդ կայանից

# ՈՍՏԻԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԵՐԸ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ - ՅԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՓՈԽՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ

Շարունակում է 6-էմ

վիճակներ ունեն: Դա խնդիր է, որը հետաքրքրում է նաև գերտեղ-րուծիչներին, քանզի ոստիկանությունը ներքաղաքական, հասարակական կեանքի խաղաղութեան ապահովման երաշխիքը պէտք է լինի: Այսպէս՝ ԱՄՆ-ի արդարադատութեան ազգային ինստիտուտի հովանաւորութեամբ հոգեբանների անցկացրած հետազոտութիւնը ցոյց է տուել, որ գոյութիւն ունեն բազմաթիւ որոշիչ գործօններ, որոնց օգնութեամբ կարելի է աշխատանքի համար դիմողների հարցման ընթացքում յայտնաբերել բուժական հնարաւոր դէպքերը: Հետազոտութեան արդիւնքները թոյլ տուեցին առանձնացնել (մոդելաւորել) բուժական հակուած ոստիկաններին 5 տիպ: Դրանք են՝

1. Այն ոստիկանները, ովքեր ունեն բնաւորութեան անհատական խանգարումներ եւ գտնուում են մշտական ռիսկի տակ: Նման անհատները բնութիւնով մարդատեաց են եւ ունեն նարցիսական, պարանոիդ հակումներ: Այս գծերը նրանց խանգարում են յատկապէս այն դէպքերում, երբ վտանգ կամ թերահաւատութիւն են զգում իրենց հեղինակութեան նկատմամբ: Այդպիսի ոստիկանները սովորաբար դասեր չեն քաղում սեփական փորձից, չեն ընդունում իրենց վարքագծի սխալ լինելը եւ կարող են խնդիրների աղբիւր դառնալ ոստիկանական ստորաբաժանումներում:

2. Այն ոստիկանները, ում աշխատանքը նրանց ռիսկի տակ է դնում: Տրամաթիկ (հոգեվնասուած քայլին) իրավիճակները, օրինակ՝ հարկադիր հրաձգութիւնը, գործընկերոջ կորուստը, կարող են որոշ ոստիկանների մղել ուժի չարաշահման: Անհատների այս տիպը ոչ մարդատեաց է, ոչ եսակենտրոն, ոչ էլ անզուսպ: Ի դէպ, բուժական գործադրելիս այս անհատների համար մեծ դեր են խաղում ոչ թէ անձնային յատկանիշները, մարդկային որակները, այլ այն յուզական պաշարը, որ նրանք կուտակել են նախորդ պատահարների ընթացքում: Ի տարբերութիւն առաջին խմբի՝ այս ոստիկանները ենթակա են ռիսկի ոչ թէ մշտապէս, այլ միայն ճգնաժամային իրավիճակների դէպքում:

3. Այն ոստիկանները, ովքեր խնդիրներ են ունեցել իրենց ոստիկանական կարիերայի սկզբնական փուլերում: Այս խումբը բաղկացած է երիտասարդ եւ անփորձ ոստիկաններից: Ի տարբերութիւն այլ անփորձ ծառայողների՝ նրանք խիստ տպաւորուող են եւ շահագրգիռ, չեն հանդուրժում պարտութիւնները: Չնայած դրան՝ այս տիպի ոստիկանները կարող են փորձ ձեռք բերելու զուգընթաց աշխատանքում յաջողութիւնների հասնել, եթէ ունեն փորձուած դեկավարներ:

4. Այն ոստիկանները, ովքեր սխալ պատկերացում ունեն պարետային ծառայութեան ոճի մասին: Նրանք շատ խոցելի են սաղրանքների եւ մարտահրաշխանքների նկատմամբ եւ յաճախ ուժ են գործադրում միայն ցոյց տալու համար, որ իրենք ծառայութեան մէջ են: Ի տարբերութիւն առաջին խմբի՝ այս տիպի ոստիկանները վարքա-

գիծը ձեռքբերովի է եւ կարող է փոխուել, եթէ իրենց կարիերայի սկզբում գտնուեն փորձուած գործընկերոջ կամ դեկավարի հսկողութեան տակ:

5. Այն ոստիկանները, ովքեր ունեն լուրջ անձնական խնդիրներ, ենթարկուել են այնպիսի անհատական հոգեբանական ցնցումների, ինչպէս ապահարգանք, հարազատներից բաժանուելը, պաշտոնի, դիրքի կորուստը եւ այլն: Նրանք ունեն հոգեբանների խորհրդատուութեան եւ անձնական մօտեցման կարիք, ինչը յետագայում կը կանխի աշխատանքի նկատմամբ նրանց անձնական գերակայութեան հնարաւորութիւնը:

Թուարկած տիպերը՝ ամերիկեան ոստիկանների սոցիալական մոդելը, բնորոշ է իրենց հասարակութեանը: Եւ որպէս չափանիշ մեր հասարակութեան համար չենք կարող միանշանակ ընդունել, յատկապէս, հաշուի առնելով անձի սոցիալական մոտիվացիայի ուղղութիւնը, մեր երկրում հասարակական պայմաններն ու պահանջները: Օրինակ՝ ամերիկեան ոստիկանին ներկայացուող թեստի հարցերից «Կարո՞ղ է արդեօք ոստիկանը կաշառք վերցնել?» մեր հասարակութեան մէջ չի գործի, եւ անկեղծ արդիւնքների դէպքում դրանք կը համարուեն նորմայից դուրս, իսկ այստեղ տեղայնացնելուց (ադապտացնելուց) յետոյ հարցը կը դառնայ՝ «Կարո՞ղ է արդեօք ոստիկանը կաշառք չվերցնել?»: Մակայն բոլոր դէպքերում էլ անձի բնոյթը, անձնային հոգեբանական հիմքերը, դրդապատճառաւորապատկանային ոլորտը, անձի կենսաբանական եւ սոցիալական արեւմտեան առկայ են եւ բնորոշ նաեւ մեր հասարակութեան ոստիկանին:

Ոստիկանը հասարակութեան անդամ է, հասարակութիւնից մէկը, ինչպէ՞ս է ստացւում, որ լինելով բոլորից մէկը եւ առօրեայ շփումներ ունենալով հասարակութեան անդամների հետ՝ «տարբեր է» (օրինակ՝ գինուորը երկու տարի կտրուած է հասարակութիւնից) եւ յուզականօրէն «օտարուած»: Մակայն, ուսումնասիրելով այդ համակարգը, կրթութեան «սկզբունքներն» ու բարոյահոգեբանական մթնոլորտը, ակնյայտ է, որ այն «կլանում» է անձին եւ «կերտում» այդ մթնոլորտին, արժէքներին, կողմնորոշիչներին համապատասխան:

Խնդիրն այն է, որ ի սկզբանէ տարբեր հոգեբանական առանձնայատկութիւններով եւ արժէքներով անձինք են «մտնում» այդ ոլորտ: Բնականաբար, «յարմարման» (ադապտացիայի) շրջանն անցնելուց յետոյ կամ յաղթահարում են սեփական «Ես»-ի իւրաքանչիւրութիւնները եւ դառնում համակարգի անդամներից մէկը կամ, մնալով համակարգում, մշտապէս ներքին կոնֆլիկտների առկայութեամբ, չյարմարուելով՝ դառնում են «անյաջող կադրեր»: Բնագաւառը ներկայացնում է իր պրոֆեսիոգրաման՝ մասնագիտական պահանջով հմտութիւնների, ունակութիւնների, հոգեբանական յատկանիշների «գրուած» եւ չգրուած ցանկը», համակարգը: Կառավարող սկզբունքներից էլնելով՝ դրանք տարբեր երկրներում տարբեր են. դժուար է պատկերացնել Մեծ Բրիտանիայի

ոստիկանի մասնագիտական հմտութիւնների եւ անձնային որակների «չգրուած» ցանկում «դաժանութիւնը»՝ որպէս «պահանջուող» կարեւորագոյն յատկանիշ: Հայաստանում, ինչպէս նաեւ ԱՊՀ զարգացող երկրներում, որոնք «զարգանալով» կամ ցանկանալով բռնել «ժողովրդավարացման» ուղին եւ մշտապէս ունենալով իշխող վարչախմբից ազատուելու խնդիր՝ ոստիկանին ներկայացուող պահանջներն առանց նշուած յատկանիշի չի ընկալուում: Այսինքն՝ հասարակական կարգից կախուած՝ նման մասնագիտութիւններում անձնային գործօնը «վերանում է» եւ յարմարման գործընթացից յետոյ մնում է միայն «սոցիալական»:

Դիտարկենք այն փաստը, որ լինելով բացասական կարծրատիպ, միեւնոյն է, այդ համակարգ դիմող անձինք բաւականին մեծ զանգուած են կազմում: Մեր օրերում դժուար է մասնագիտութեան ընտրութիւնը: Մասնագիտութիւն ընտրելու հարցում մեծ նշանակութիւն ունի հոգեբանական գործօնը: Սակայն այդ ընտրութիւնը շատ յաճախ բխում է ոչ թէ անհատական որակների, այլ առաջնային պահանջմուտներին սկզբունքներից՝ նիւթական եւ այլ շահերից:

Հասարակութեան շերտաւորման պայմաններում, երբ առաջանում են հարուստներ եւ ծայրաստիճան աղքատներ, պետութեան մէջ իրաւախախտումները, յանցագործութիւնները եւ անարդարութիւնները գերիշխում են, օրէնքները չեն գործում, գործում է «մեղաւորը միշտ թոյլն է» սկզբունքը: Այսպիսի պայմաններում մասնագիտական ընտրութիւնը կատարւում է ոչ թէ անձի նախասիրութիւններին, առանձնայատկութիւններին համապատասխան, այլ առաւելագոյն համալրուածութեամբ՝ աշխատանք ունենալու, աշխատանքում աճելու եւ իշխանութիւն ձեռք բերելու հնարաւորութիւն, նիւթական շահ, թերեւս տղաների համար խիստ արդի՝ բանակի խնդրի լուծում եւ որպէս օրինապաշտպան շղթայի մի մաս՝ օրէնքի հովանաւորութիւն, այսինքն՝ առաջնորդում են նախընտրելի «յարմարաւետութեան»՝ «գողի» փոխարէն «գող բռնողի» հոգեբանութեամբ: Եւ ի վերջոյ՝ շատ «պատահական» անձինք յայտնուում են իրենց անձնային յատկանիշներին ոչ համապատասխան «դաշտում», որից յետոյ անհրաժեշտ է այդ դաշտում յարմարուելը:

Օրինակ՝ ներքին գործերի բարձրագոյն դպրոցի սաները, ելնելով բնաւորութեան առանձնայատկութիւններից, պէտք է միջոցներ մշակեն «յաջող» յարմարմանը՝ ընտելանալու համար այդ պայմաններին: Ցանկալի է, որ այդ առանձնայատկութիւններն ընդգծուած չլինեն, քանի որ նշանակալիօրէն փոքրացնում են յարմարման սուբիեկտիւ կարողութիւնները «նոր դերում»: Յարմարումը կարող է անյաջող անցնել այն իմաստով նաեւ, որ

յուզականօրէն յագեցած, լարուած այդ շրջանում, երբ սթրեսածին ազդակները տեւական բնոյթ ունեն, անձի որեւէ առանձնայատկութիւն կարող է խորանալ եւ ախտաբանական զարգացում ապրել: Որոշ հոգեբանական յատկանիշների (օրինակ՝ ռիզիկոսութեան (անճկունութիւն), իմպուլսիւտութեան, սենզիտիւտութեան (զգայունակութիւն) առկայութեան դեպքում աւելի դժուար է ներքին գործերի կուրսանտների յարմարումը, իսկ այդ յատկանիշների առկայութեան դէպքում առաւել եւս սրում է կուրսանտների շրջանում փոխհատուցման անհրաժեշտութիւնը (պատանեկան ռոմանտիզմից դեպի խիստ եւ սահմանափակ իրականութիւն): Սովորելու ընթացքում տարած դժուարութիւնների փոխհատուցումը նշանակալի դիրքի գրավումն է, իսկ ընթացքում՝ ներքին մթնոլորտը, մարդկային անդէմ փոխարարութիւնները կարող են «ապահովել» հոգեբանական առանձնայատկութեան «աճը» դէպի շեղում եւ ընդգծուած հոգեբանական խնդիրների առաջացման համար պարարտ հող լինել: Բնականաբար, նման անձինք հաւասարակշռութիւն ստեղծելու համար դիմում են պաշտպանական մեխանիզմների եւ հոգեբանական փոխհատուցումների: Առաւել վառ դրսեւորուող հոգեբանական պաշտպանական մեխանիզմներից է ազդեցիկան, որն ամրապնդում եւ դառնում է անձնային, աւելի ճիշտ՝ մասնագիտական առանձնայատկութիւն: Առհասարակ, ողջ ներքին կոնֆլիկտների առկայութեան գիտակցումը թոյլ է տալիս այդ անձանց գիտակցել նաեւ սեփական թերարժէքութիւնը, եւ նրանք անգիտակցօրէն ձգտում են յաղթահարել անբաւարարուածութեան եւ ֆրոստրատիւ (յուսախաբութեան) վիճակները: Այս մեխանիզմի վարքային «շարունակութիւնը» խիստ վտանգաւոր կարող է լինել հասարակութեան համար: Բացի հոգեբանական ինքնապաշտպանական մեխանիզմներից, այս ոլորտի անձինք ունեն «արտաքին ինքնապաշտպանական գործօններ», որոնցից են, օրինակ, ծառայողական գէնը, ծառայողական դիրքը, հագուստը, «օրէնքի հովանաւորութիւնը», «դիմակը»: Սրանք լրացնում, ամբողջականացնում, փոխհատուցում են այն բարոյութիւնները, յատկանիշները, որոնք ընդգծում են անձի «Ես»-ի թուլութիւնը եւ, փոխհատուցելով այսպիսի մեխանիզմներով, նմանում են «գայլի մորթով ոչխարների», որոնք այդ դիմակով դառնում են ազդեցիկ ու վտանգաւոր, եւ պատուհաս են հասարակութեան համար:

Յատուկ ծառայութիւններն անհրաժեշտ իրողութիւն են պետութեան կեանքում, իսկ ցանկացած իշխանութեան կամ վարչակազմի համար ոստիկանութիւնն անփոխարինելի գործիք է, եւ նրա կատարած գործողութիւններով կարելի է բնութագրել, կարծիք կազմել իշխանութեան եւ կառավարութեան, հասարակարգի խոցելի եւ թոյլ տեղերի մասին:

**ՄԱՍԻՍ**  
**ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ**